

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1877



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Հ. Կ. ԽԱՉԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1930 - 1931

ՄԻԱՄԵԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Ե Ի

ԺԱ. ԸՆԴՀ. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

614.88

Հ-24

614.88
Σ-24

0 Կ. 8

{9} 3.0



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր
Յ. Կ. ԽԱԶԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
1930 - 1931

ՄԻԱՄԵԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

Ե Ի

ԺԱ. ԸՆԴՀ. ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՂԵՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
ՄԻԱՄԵԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
Ե Ի
ԺԱ. ԸՆԴՀ. ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
1930 — 1931
ՄԻԱՄԵԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
Ե Ի
ԺԱ. ԸՆԴՀ. ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սիրելի ընկերուհիներ եւ ընկերներ,—

Կազմակերպական տարեշրջանը որ բոլորեցինք, յուսահատականորէն բուռն պայքարի շրջան մը եղաւ մեզ եւ մեր բոլոր Շրջանային Վարչութեանց եւ մասնաճիւղերուն համար ամենուրեք:

Տնտեսական ծանօթ եւ սարսափելի տաղնապը մեր գործերուն վրայ իր խոր կնիքը դրաւ, անխտիր:

Այս յայտնի իրողութեան ակնդէտ, մեր շարքերը սակայն, բոլոր երկիրներու մէջ, ոգի ի բոլոր աշխատեցան բարոյական եւ նիւթական առաւելագոյն յաջողութիւններ ձեռք բերելու Հայ Կարմիր Սաշին համար, կարենալ բաւարարելու այն բոլոր առաջադրութիւններն ու նպատակները, որոնք նախատեսուած էին անցեալ Ժ. Ընդհ. Պատգամաւորական Ժողովէն:

Առաջին խօսքը որ մեծ գոհունակութեամբ պիտի կարենանք ըսել, այն է, որ Հայ Կարմիր Սաշի բոլոր Շրջաններու Մարմիններն ու Մասնաճիւղերը, միատեսակ մտածումով եւ իւրաքայտուկ խորին ըմբռնողութեամբ մը, հետեւողական եղած են Ժ. Ընդհ. Ժողովի որոշումներուն, եւ որ աւելին է, նոյն այդ Ընդհ. Ժողովին բխող բարձր արամադրութիւնը, ընկերական ներդաշնակ ոգին եւ գործին հանդէպ խոր հաւատքը տարածած են ամէն ուր որ Հայ Կարմիր Սաշը գոյութիւն ունի:

Եւ անկարելի է, որ չյայտնենք այս Գերագոյն Ժողովին, այն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՂԵՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

112583-42

2280-2011

իրողութիւնը մանաւանդ, որ ամենուրեք դադուրեցան հայ համայնքը դարմանալիօրէն վարակուեցաւ Հայ Կարմիր Սաշի ակնյայտնի խանդավառութենէն, եւ նոր իմաստ մը, յոյսի շարժում մը նշմարեց Հայ Կարմիր Սաշի ծաւալուն եւ կենսուրախ գործունէութեան մէջ: Մեր մակընթացութիւնը այսքան ուշադրաւ ու այսքան բարեյոյս եղած է այս անցնող տարեշրջանի տեւողութեանը:

Եւ որպէսզի չոր խօսք մը ըսած չըլլանք, կատարուած աշխատանքին ու ձեռք բերուած յաջողութիւններուն համար, մենք կուգանք ողջունելու այս մեծ ժողովը իր ամբողջութեանը մէջ, եւ կ'անցնինք փաստերու առարկայական նիշերուն:

Կ'ողջունենք ուրեմն, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Ատրպատականի, Իրաքի, Թրակիոյ-Մակեդոնիոյ, Յունաստանի, Սիւրիոյ, Արեւմտեան Եւրոպայի, Հաւանայի, Քանադայի, եւ Միացեալ Նահանգներու մեր բոլոր մասնաճիւղերուն ներկայացուցիչները, որոնք մէկ տարուան Կարմիր Սաշային ճարպիկ ու ճկուն աշխատանքներէ վերջ, այսօր կը ներկայանան այս Ընդհանուր Ժողովին, գոհունակ ճակատով, հաշիւ ու համար տալու իրենց ու գոհաբերող հայ հասարակութեան համար միանգամայն, եւ դժելու նոր նուաճումներու ուղի մը, դարձեալ բազմաչարչար այն բեկորներուն համար, որ այսօրուան ու վաղուան ամբողջութիւնը կը կազմեն Հայուն ու Հայաստանին...

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

10-րդ Ընդհ. Ժողովէն ընտրուած Վարչութիւնը՝ ընտրելէ ետք իր ղեկանը, առաջին նիստին մէջ իսկ դասաւորեց Ընդհ. Ժողովի որոշումները եւ հետզհետէ աշխատեցաւ գործադրել զանոնք: Կեդր. Վարչութիւնը իր նիստերը գումարած է կանոնաւոր կերպով ամէն ուրբաթ, միշտ մեծամասնութեամբ եւ շատ անգամ բոլոր անդամներու ներկայութեամբ:

Տարեշրջանի ընթացքին, ունեցած ենք 49 նիստ, որմէ չորսը խորհրդակցական ժողովներ եղած են, շրջանի մասնաճիւղերու մասնակցութեամբ: Ունեցած ենք ղեկանի 12 խորհրդակցական նիստեր, ուր նկատի առնուած հարցերը ենթարկուած են լրակատար նիստերու հաւանութեան:

Մեր յարաբերութիւնը բոլոր շրջաններու հետ եղած է կանոնաւոր: Հրատարակած ենք 5 շրջաբերականներ եւ երկու կոչեր, մէկը Քսանաճեակի տօնակատարութեանց առիթով, միւսը ծոմապահութեան: Տարեշրջանի ընթացքին մեր գրած նամակները, որոնց թիւը 1700-ը կ'անցնի, կրնան աւելի լաւ դադափար մը տալ մեր յարաբերութեան ու գործին շուրջ: Այս նամակներուն ֆօփիսերը կը տրամադրենք այս ժողովի քննութեան:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ. —

Այս տարեշրջանին կազմակերպած ենք հետեւեալ նոր մասնաճիւղերը. —

- 1. — Եռթիքա, Ն. Ե., 10 անդամներով.
 - 2. — Նորթ Կիլատեյֆիա, 12 անդամներով.
 - 3. — Միլիէնտէյլ, Միչ., 10 անդամներով.
 - 4. — Ութթրթաուն, Սան-Սանուէիներու խումբ, 50 անդամներով.
 - 5. — Սիրաքիւղ, Սան-Սանուէիներու խումբ, 7 անդամներով.
 - 6. — Թրոյ-Ութթրիթ, Սան-Սանուէիներու խումբ, 12 անդամներով.
 - 7. — Լօս Անճէլըս (Քալ.), Սան-Սանուէիներու խումբ, 16 անդամներով.
 - 8. — Վուստը, Սան-Սանուէիներու խումբ, 26 անդամներով.
 - 9. — Փրովիտենս, Սան-Սանուէիներու խումբ, 18 անդամներով.
 - 10. — Ուէստ Նիւ Եորք, Սան-Սանուէիներու խումբ, 18 անդամներով.
- Ընդամէնը 10 նոր մասնաճիւղեր 179 անդամներով:

ՎԵՐԱԿԱԶՄ ՈՒԱԾ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ. —

- 1. — Մեսիլնայի մասնաճիւղը 15 անդամներով.
- 2. — Պրուքլինի մասնաճիւղը 9 անդամներով.
- 3. — Լօս Անճէլըսի մասնաճիւղը 27 անդամներով:

ԼՈՒԾ ՈՒԱԾ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ. —

- 1. — Պէլմոնդ.
- 2. — Քնօշա.

- 3.— Պոստոնի Սան-Սանուհիներու խումբ .
- 4.— Հայլընա Փարքի Սան-Սանուհիներու խումբ .
- 5.— Ֆրէզիոյի Սան-Սանուհիներու խումբ :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԹԻՒԻՂ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ .—

Ունինք ընդամէնը 64 մայր-մասնաճիւղեր , 1292 անդամներու և 11 Սան-Սանուհիներու խումբեր , 188 անդամ-անդամուհիներով :

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1.— ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՔԷՄՓԷՅՆ .—

Ինչպէս ձեզ յայտնի է , ներկայ տարեշրջանի սկիզբէն՝ Կեդր-Վարչութիւնը յայտարարեց անդամազրուեթեան մրցանակաւոր քէմփէյն : Այդ քէմփէյնի արդիւնքը Ամերիկայի շրջանին համար եղաւ 395 նոր անդամներու յաւելում մը եւ այս առթիւ Ամերիկայի մէջ մրցանակ չահեցաւ Տիթրոյիթի «Սաթենիկ» մասնաճիւղը՝ իր անդամներու թուին վրայ 42 նոր անդամներ աւելցուցած ըլլալուն համար : Ծահած մրցանակին է՝ մեր ամենուս սիրելի Ջօրպլար Անդրանիկի մէկ ասեղնազորձ կենդանազիրը , զոր Պուլկարիոյ մեր ընկերուհիները իրենց ձեռքով բանած ուղրկած էին մեզի :

Ամերիկայէն դուրս , մրցանակ չահողն եղաւ Պուլկարիան , որ ունեցած է 161 նոր անդամներու յաւելում , իր շրջանի անդամներու թիւը բարձրացնելով 579-էն 740-ի : Մրցանակն է 50 տուր :

2.— ՔՍԱՆԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՄՆԵՐ

Ժ . Ընդհ . Պատգմ . Ժողովէն սկսաւ Տօնական Հանդիսութեանց շարքը , Հայ Կ . Սաչի Քսանամեակի առիթով :

Այս առթիւ հանրութեան ուղղած մեր Կոչը , Քսանամեակը միասին տօնելու համար , արձագանգ դտաւ բարեկամ նկատուած մամուլին կողմէ , անխտիր — Միացեալ Նահանգաց եւ արտասահմանի մէջ : Եւ ամբողջ տարեշրջանի ընթացքին , բոլոր դադութներու մէջ իրարու յաջորդեցին Հայ Կ . Սաչի Քսանամեակի Տօնական հանդէսները , շատ վայելուչ եւ շքեղ կերպով : Մեր

զորձը լայն կերպով բացատրուեցաւ ամենուրեք եւ լայն հասարակութիւն մը սեփականացուց մեր ձգտումներն ու նպատակները եւ խորապէս համոզուեցաւ մեզի հետ , որ այս Կաղմակերպութիւնը Հայ Ժողովրդի ծոցէն ծնած , իր կոչումին արժանի եւ իր նպատակին անշեղ կերպով հետեւող Հայ Կանացի մեծ կաղմակերպութիւնն է , որ իր ճիւղերը տարածած է բոլոր դադութներու մէջ , միաճակատ եւ միահամուռ կերպով , նոր ու աննախընթաց շարժում մը ստեղծած ըլլալով Հայ Կանանց աշխարհին մէջ :

Այսպիսով , Քսանամեակի հանդէսները լաւագոյնս ծառայեցին բուն նպատակին եւ տեղ տեղ անոնք նոյնիսկ հասութարեր եղան :

3.— ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ

Հրապարակ հանեցինք մօտ 6,500 շնորհաւորական բացիկներ քանի մը տեսակներով եւ դներու տարբերութեամբ , որոնց համար ծախսեցինք 465 տուար 23 սէնթ , քարտերու դնին եւ քրքրուրու պատրաստութեան :

Քարտերը ուղարկեցինք մասնաճիւղերուն , որոնք ջանացին սպառել զանոնք , նշանակուած դներով , ի հաշիւ իրենց քօթաներուն :

Ծախուած քարտերէն դոյացաւ 516 տուար 13 սէնթ , բաժնըլած մասնաճիւղերու քօթաներուն մէջ :

Ձծախուած բաւական թիւով քարտեր կան , թէ մեր քովը եւ թէ մասնաճիւղերուն քով մնացած , որոնք պիտի սպառին յառաջիկայ տօնական օրերուն , որ առթիւ պիտի դոյանայ իրական չահը :

4.— ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ըստ Ժ . Ընդհ . Ժողովի որոշման , անցնող տարեշրջանի Աւագ Ուրբաթը ծանուցինք իրրեւ Ծովապախուքեան Օր :

Այս առիթով հրատարակեցինք Կոչ մը , հրաւէր կարդալով հանրութեան , որ նշանակուած օրը ծով պահելով , մէկական ճաշադին նուիրեն Հայ Կ . Սաչի որբահաւաք զորձին : Մեր Կոչը արձագանգ դտաւ բարեկամ մամուլի մէջ , հոս եւ արտասահման :

«Հայրենիք»ը այս առթիւ խմբագրական մը նուիրեց, իսկ Ջօր. Սեպուհն եւս իր կարգին կոչ ըրաւ մամուլով, ընդառաջ երթալու մեր առաջարկին:

Նուիրատուութեանց արդիւնքն այն եղաւ, որ մեր Գրասենեակը առանձին, ստացաւ 70 տոլար, իսկ մեր մասնաճիւղերը Ամերիկայէն եւ Քանատայէն, նոյն իսկ հեռաւոր Քուպայէն, ըստացան եւ մեզի ղրկեցին համագումար — 614 տոլար եւ 45 սէնթ: Ընդհանուր գումարը ուրեմն, ծոմապահութենէն դոյաջած — \$684.45:

Ինչպէս պիտի նշմարէք մեր հաշիւներէն, այս գումարը յատկացուած է արդէն նուիրատուներու բաղձանքին ու մեր առաջադրութեան համաձայն, իր բուն նպատակին, եւ կ'առաջարկենք, որ այս ժողովը որոշում մը քուէարկէ, որով նուիրականացուցած ըլլայ, ամէն տարի Աւագ-Ուերբաթը, իբրեւ մնայուն օր Ծոմապահութեան:

5.— ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԴՊՐՈՅԸ

ԵՒ ՄԵՐ ՄԱՍՆԱՃԻՒԴԵՐԸ

Ժ. Ընդհ. ժողովը որոշեց, որ Ամերիկայի Երջանի մեր մասնաճիւղերը մինչայժմեան եղածէն քիչ մը աւելի կարեւորութիւն ընծայեն հայ դպրոցներու, եւ նոյն իսկ իրենց եկամուտներուն 15 առ հարիւրը յատկացնեն տեղական դպրոցներուն, երբ իրենք են նախաձեռնողը, կամ գաղութային այլ մարմիններու հետ միասնորէն ջանքեր ի գործ դնելով կը հաստատեն տեղական վարժարաններ, հայեցի դաստիարակութեան համար:

Մասնաւոր Հարցարաններ ուղղեցինք անխտիր, Ամերիկայի Երջանի մեր մասնաճիւղերուն, հասկնալու համար թէ անոնցմէ քանի՞ն այս գործին առանձնապէս կամ այլ կազմակերպութեանց հետ միասնորէն լծուելով, հաստատած են դպրոցներ: Միւս կողմէն, ուղեցինք մեր յատուկ հարցարաններովը ստուգել, առանձին պայմանները իւրաքանչիւր գաղութի մէջ բացուած դպրոցի, անոր տարեկան պիւտձէի եւ եկամուտ նիւթական հասոյթի եւ ծախքերու բնոյթը:

Մեր ստացած 27 պատասխաններէն քաղեցինք հետեւեալ տեղեկութիւնները.—

Ձուտ Հայ Կ. Սաչի նախաձեռնութեամբ եւ ղեկավարու-

թեամբ, 8 տարբեր կեդրոններու մէջ, անցնող տարեշրջանին բացուած եւ շարունակուած են մայրենի լեզուի ուսուցման համար դպրոցներ: Իսկ երեք տարբեր վայրերու մէջ ալ, մասնաճիւղերը կ'իսովին իրենց վրայ են առած դպրոցներու հոգաբարձութիւնը:

Միւս 19 վայրերու մեր մասնաճիւղերը կ'օժանդակեն ըստ հնարաւորութեան, գաղութային խառն մարմիններու հովանաւորութեամբ բացուած դպրոցներուն:

Ձուտ մեր մասնաճիւղերու նախաձեռնութեամբ կառավարուող դպրոցներն են.— Տիթրոյիթի Սաթենիկ մասնաճիւղի, Ջըլսիի, Կրանիթ Սիթիի, Հարթֆըլըտի, Ինտիանա Հարպըրի, Վօքէկընի, Կոլթի ու Կուէլֆի դպրոցները: Ընդհանրապէս, դպրոցները կը գոցեն իրենց տարեկան ծախքերը եւ գրեթէ բաց չեն ունենար: Մեր այն մասնաճիւղերը, որոնք դպրոցի հոգը ստանձնած են, բաւական լուրջ եւ պատրաստուած անձինք վարձած են իրր ուսուցիչ կամ ուսուցչուհի:

Ընդհանուր Ամերիկայի մէջ չկայ հայ դպրոց, կազմակերպուած ծրագրով եւ ուսուցման միատեսակ եւ մեթոտիկ հասկացողութեամբ: Տեղ տեղ, օրինակելի դպրոցներ կան, արժանի իրենց կոչման եւ վկայեալ ուսուցչուհիներով: Սակայն անմիութար է պատկերը երբ ամբողջացնել ուզենք զայն: Ահապէս թիւով գաղութներ կան, բոլորովին զուրկ, գոնէ այդ եղածներուն պէս համեստ դպրոցէ մը: Այս հարցը ընդհանուր գաղութային հարց մըն է եւ մամուլն ալ զբաղելով այս խնդրով, որոշ արդիւնքի մը չէ հասած եւ գործնական եզրակացութիւն մը ձեռք բերուած չէ այս մասին:

Պատգմ. ժողովիդ կը մնայ, լուրջ խորհիլ եւ ուղիղ ճամբայ մը գծել, որմէ անվարան կերպով կարողանայ քալել Ամերիկայի, Քուպայի եւ Քանատայի մէջ Հայ Կ. Սաչը՝ իր կատարելիք դերին համար, դպրոցական գործին ի խնդիր:

6.— ՄԱՆ-ՄԱՆՈՒ ՀԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորահաս սերունդի կազմակերպութեան այս դժուարին գործը, նմանապէս, զբաղեցուցած է մեզ եւ մենք կը տեսնենք որ խելացի կերպով թափուած ջանքերը որոշ արդիւնք կ'ուտան: Այս գործը կարծուածէն աւելի ըլլալով լուրջ ու դժուար գործ մը,

կը կարօտի առանձինն ուսումնասիրութեան: Մենք դործնական կը գտնենք նորահաս սերունդին պատկանող եւ հայերէնի ու անգլիերէնի հմուտ մէկը չըլեցնել գէթ ժամանակաւոր կերպով դադարէ գաղութ, հասկցնելու համար նախ այն՝ ինչ որ մեր տեսակէտն է ծրագրային հիմունքներով, եւ հասկցուել անոնցմէ լիապէս: Ուր որ հնար է ու հող կայ, կազմակերպել նոր սերունդը եւ իրականօրէն դործադրել Կանոնադրի նպատակը կազմող յօդուածները.— որ է՝ տալ անոնց մայրենի լեզուով կրթութիւն, եւ ծանօթացնել հայ պատմութեան ու գրականութեան: Նոր սերունդի կազմակերպութեան այս գործը պէտք է յառաջ տարուի մեր բոլոր շրջաններուն մէջ, լեզուի, միջավայրի ու բարքերու համապատասխան միջոցներով:

ԶԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.— ՀԱՆԴԵՐՁԱՀԱՒԱՔԻ ԳՈՐԾԸ

10-րդ Ընդհ. ժողովը որոշած էր իբրեւ հասոյթի աղբիւր, հաւաքել հին եւ դործածելի հագուստներ ու արտասահմանի Շրջ. Վարչութեանց միջոցաւ վաճառել դանոնք:

Այս առթիւ մեր կատարած ուսումնասիրութիւնը մեզ բերաւ այն եզրակացութեան, որ ներկայ պայմաններուն մէջ այս գործը ոչ միայն հասոյթ պիտի չբերէր՝ այլ մեծ ծախքերու պիտի ենթարկէր Վարչութիւնն: Նկատի ունենալով մաքսի, մթերանոցի, ճանապարհածախսի եւ աշխատաւորներու տալիք մեր գումարները եւ միւս կողմէ այն շուկան ուր բնաւ պահանջ չկայ այդպիսի ձեռնարկի մը, Կեդր. Վարչութիւնն խոհեմութիւն համարեց չգործադրել 10-րդ ժողովի այս որոշումը:

2.— ԳԱՆՁԱՆԱԿՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԳՈՐԾԸ

10-րդ Ընդհ. ժողովին այս մասին կայացուցած որոշումն ալ կարենալ գործադրելու համար, կատարեցինք հարկ եղած ուսումնասիրութիւնները: Գտանք որ այս ալ մեծածախս գործ մըն է եւ Ընդհ. ժողովը նախատեսած չէր ծախքի այդ մեծութիւնը: Որոշեցինք յետաձգել:

Այս տարեշրջանին մեր ընդհ. մուտքը եղած է \$12,710.38: Ընդհ. ելք՝ \$14,165.36: Յունիս 30-ին գանձը պատրաստ ունինք՝ \$2,933.14:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ

Այս շրջանի Գ. Պատգմ. ժողովը տեղի ունեցած է 1930 Նոյեմբերին, ուր տրուեցան կարեւոր որոշումներ եւ եղան առաջարկներ ներկայացնելու համար ԺԱ. Ընդհ. ժողովին: Ֆրանսայէն եկած առաջարկները դրուած են արդէն մեր օրակարգին վրայ եւ այս ժողովը պիտի տայ իր որոշումները: Այս շրջանն ունի 11 մասնաճիւղեր, շուրջ 500 անդամներով: Տեղական հասոյթներ գոյացնելով օգնած է հիւանդներու, ուսանողներու եւ մանկապարտէզներու: Այս շրջանի մեր կազմակերպութիւնը ուժեղացրնելու եւ գործի մղելու համար, հարկ է որոշ պիւտճէ յատկացրնել եւ աշխատիլ գոհացում տալ այն տեղի պահանջներուն, որոք չեւտուած են մեզի զրկուած տեղեկագրին մէջ: Հոս նոյնպէս Հ. Կ. Սաչի Քոստամեակը տօնուած է վայելչօրէն եւ մասնակցութեամբ ազգային սիրուած եւ ծանօթ գէմքերու:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՐ. ԵՒՐՈՊԱՅԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1930 ՆՈՅՆՄԲԵՐ — 1931 ՅՈՒՆԻՍ

Մ Ո Ւ Տ Ք

		Ֆր. ֆրանք
Մնտուկը պատրաստ	6,370.85	
Մասնաճիւղէն ստացուած	5,453.85	
Սարմաստի աղէտ. համար, առ հաշիւ	560.00	
Չանդեզուրի աղէտ. առ հաշիւ	536.00	
	<hr/>	
Գումար՝		12,920.70

Ե Լ Ք

		Ֆր. ֆրանք
Գ. Պատգմ. ժողովի ծախքեր	604.00	
Ուսանողներու տրուած նպաստ	1,950.00	
Հիւանդներու տրուած նպաստ	200.00	
Դպրոցի տրուած նպաստ	200.00	

Մակեդոնիոյ որբերուն զրկուած	500.00
Սալմաստի աղէտեալներուն զրկուած	2,100.00
Կազմակերպական ծախքեր	774.95
Գրասենեակի ծախքեր	959.30
Կեդր. Վարչութեան զրկուած (1929-1930)	1,578.50
	<hr/>
	8,866.75
Մնտուկը պատրաստ	4,053.95
	<hr/>
Գումար՝	12,920.70

ՌՈՒՄԱՆԻԱ

Այս շրջանն ալ երկու տարիէն արդէն դարձած է տեղւոյն լաւագոյն կազմակերպութիւններէն մին: Երջանային Վարչութիւնը ձեռնհասօրէն կը վարէ գործը: Յունիս 5-ին ունեցաւ Բ. Պատգ. Ժողովը Պուքրէշի մէջ: Ունի երեք մասնաճիւղ 240 անդամներով: Երջ. Վարչութիւնը եղած է կանոնաւոր յարաբերութեան մէջ մեզ հետ: Թէ՛ Երջ. Վարչութիւնը եւ թէ՛ մասնաճիւղերը գոյացուցած են հասոյթներ եւ հողացած են տեղական կարիքներ, ինամեղով հիւանդներ ու տալով նպաստներ: Աշխատանք կը կատարուի նոր մասնաճիւղեր հիմնելու համար ուրիշ քաղաքներու մէջ: Այս շրջանը նոյնպէս ունի ձեռագործի հարց: Մեր ստացած տեղեկագրերը, հաշուեկշիռներն ու տեղական Պատգմ. Ժողովին որոշումները կը դնենք 11-րդ Ընդհ. Ժողովի տրամադրութեան տակ:

ԵՐԿԱՄԵԱՅ ԸՆԴՀ. ՀԱՇՈՒԵԿՇԻՌ Հ. Կ. ԽԱԶԻ

ՌՈՒՄԱՆԻՈՅ ՇՐՋԱՆԻ, Պուքրէշ

1 ՀՈԿՏ. 1929 — 12 ՅՈՒՆԻՍ, 1931

Մ Ո Ւ Տ Ք

Հիմնադրամ պրն. Զամալեանէ	2,000.00	
Պուքրէշի մ.ճիւղէն կեդրոնի բաժինը	18,660.00	ԼԵՂ

Գոստանցայի Մ.ճիւղի կ.ի բաժինը	16,043.00
Պաղարճըղի Մ.ճիւղէն կ.ի բաժինը	6,636.00
Կեդր. Վարչ. անդամուհիներէն նպաստ աղքատ ուսանողներու	5,000.00
Նուէր փոխան ծաղկեպսակի	500.00
	<hr/>
Գումար՝	48,839.00

Ե Լ Ք

ԼԵՂ

Գր. պիտոյք կեդրոնի եւ Մ.ճիւղերուն	5,200.00
Աղքատ ուսանող մը Վենեաիկ զրկելու	7,000.00
Հիւանդներու եւ դեղերու	4,095.00
Ճանապարհածախս բանախօսներու	4,240.00
Առժամեայ փոխատուութիւն կարօտ ուսուցիչի մը	2,000.00
	<hr/>
	22,535.00

Պոստոնի Ընդհ. Կեդրոնին զրկուած %25	6,576.00
Պատրաստ դրամ Պուքրէշի կ.ի մօտ	19,728.00
	<hr/>
Գումար՝	48,839.00

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ահաւաստիկ շրջան մըն ալ որ պատիւ կը բերէ մեր կազմակերպութեան: Պուլկարիոյ մեր Երջ. Վարչութիւնն իր մասնաճիւղերով շատ կարճ ժամանակի մէջ ծաւալեցաւ ու դարձաւ տեղւոյն վրայ համակրելի ու գործունեայ կազմակերպութիւն մը: Նախորդ Ընդհ. Ժողովին դեռ նորակազմ այս շրջանն ունէր 11 մասնաճիւղ 579 անդամներով. մէկ տարուան մէջ գրեթէ կրկնա-

պատկուած է անդամներու թիւը: Այժմ, Պուլկարիան ունի 13 մասնաճիւղ, 740 անդամներով:

Երջ. Վարչութեան ներկայացուցած հաշուեկշիռէն կը տեսնենք որ ոչ միայն բարոյական յաջողութեան շրջան մը բոլորած է Պուլկարիան, այլ ունեցած է նաեւ աչքառու նիւթական յաջողութիւն, հակառակ տիրող տնտեսական տաղնապին: Ասիկա ապացոյց է, որ Պուլկարիոյ մեր մարմինը կը վայելէ մեծ համակրութիւն ու գուրգուրանք եւ այս՝ անոր համար, որ թէ՛ Երջանային Վարչութիւնը եւ թէ՛ մասնաճիւղերը կատարած են կենդանի աշխատանք:

Երջ. Վարչութիւնը մեզի ներկայացուցած է ձեռագործի աշխատանոցներ հիմնելու ծրագիր մը, որը նոյնութեամբ կը դնենք ժողովիդ տրամադրութեան տակ, քննելու եւ ըսելու համար ձեր խօսքը:

Երջ. Վարչութիւնը Պուլկարիոյ մէջ ունի նաեւ դպրոցներու հարց: Մեսրոպեան ձեմարանին մեր օժանդակութիւնը, մասնաւորապէս, կը խնդրեն որ շարունակուի, նոյնպէս եւ Խասքովոյի վարժարանին:

Այս տարեշրջանին Պուլկարիոյ Երջ. Վարչութեան զրկեցինք 250 տոլար, որ յատկացուած է Մեսրոպեան ձեմարանին, Խասքովոյի վարժարանին եւ մաս մըն ալ ձեռագործի պիտոյքներու գընման: Տեղական միջոցներով հոգացած եւ խնամած են հիւանդներ ու աղքատ ուսանողներ, նպաստած են զանազան վարժարաններու գրենական պիտոյքներով եւ հագուստեղէն ու սնունդ տալով չքաւոր աշակերտներու: Մեծ շքեղութեամբ տօնած են շ. կ. Խաչի Քսանամեակը բոլոր վայրերուն մէջ եւ այդ առթիւ ունեցած են թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական մեծ արդիւնք: Պուլկարիոյ շրջանը մեր լաւագոյն շրջաններէն է: Յառաջիկայ տարուան համար կը թելադրենք նկատի ունենալ այս շրջանի կարիքները, որոնք առաւելապէս կրթական կարիքներ են:

Ձեռքի տակ ունինք նաեւ Մեսրոպեան ձեմարանի տեղեկագիրը, որ համառօտ կերպով ներկայացնելէ ետք ձեմարանի նիւթական ու բարոյական պատկերը, կ'ընէ հետեւեալ առաջարկները, զոր կը յանձնենք 11-րդ Ընդհ. Ժողովի նկատողութեան:

Նկատելով որ գաղութահայ իրականութեան մէջ առաջին կարգի մէկ երկու հաստատութիւններէն մէկն է այս եւ որ իր գո-

յութեան ընթացքին սահմանուած է խոշոր դեր մը կատարելու՝ հայուն պահպանման գործին մէջ.

Նկատելով որ համեմատաբար խոշոր դժուարութիւններն անցած են եւ ձեմարանն այլեւս տեւական դառնալու երաշխիքներ կ'ընծայէ.

Նկատելով որ իր տեւականացման եւ իր դերին մէջ մնալու համար անհրաժեշտ է իր պիւտճէն բաւարարող աշակերտութիւն մ'ապահովել.

Կը խնդրեմ որ Պատ. Ընդհ. Ժողովը բարի ըլլայ մէկ քանի զիջելութիւ սաներ, որբեր կամ հայ մտաւորականներու, վեթերաններու զաւակներէն աշակերտներ պահել ձեմարանին մէջ, դէթ տարեկան 5-6 հոգի: Այդպիսի տղաքներ կա՛ն մանաւանդ Պուլկարիոյ մէջ եւ օրէ օր իսպառ կորսուելու վրայ են: Հանդիպած եմ վեթերան, մտաւորական, նախկին զինուորական անհատներու տղոց Պուլկարիոյ զանազան յետ ընկած անկիւնները (ինչպէս Լոմ, Ծումէն, Սվիլէնկրատ, Խասքովօ եւայլն), ուր այդ տղաքը յետին չքաւորութեան մէջ ու գրեթէ անուսում կը փճանան: Անոնցմէ ոմանք յաճախ դիմած են մեզի ձեմարան ընդունուելու համար, բայց մենք չենք կրցած բաւարարել, ընդունիլ զանոնք: Այդպիսի զիջելութիւ տղոց համար տարեթոշակն է 120 տոլար, սնունդի, ուսման եւ գրեն. մանր ծախսոց համար:

Միւս կողմէ քանի որ ձեմարանը կը գտնուի Սոֆիայի մէջ, ուր կայ Ազգ. նախակրթարան մը, կրնայ մեծապէս օգտակար ըլլալ հայ ցերեկեայ տղոց կրթութեան գործին: Ամէն տարի 15-20 ընթացաւարտներ դուրս կուգան ազգ. վարժարանէն, ամէնքն ալ որը կամ աղքատիկ ծնողներու զաւակներ, հոն հազիւ հայ այրուրենը սորված կը մտնեն օտար, պուլկար դպրոցներ կամ շուկան, ուր շուտով կը կորսուին, կ'օտարանան, կը ձուլուին: Այդ տղաքը պիտի կրնան իրենց ուսումը շարունակել տարեկան 15-20 տոլարի դոհողութիւնով մը: Այս տարի այդ տղաքներէն 10 հոգի չափ տեղոյս Գթ. Խաչի Երջ. Վարչութիւնը կրցաւ փրկել ու դրնել ձեմարան, շնորհիւ ձեր ուղարկած 150 տոլարին: Բնականարար այդ տղաքը պէտք է որ իրենց ուսումը շարունակեն եւ անոնց հետ այս տարուան ընթացաւարտներէն ու պուլկ. դպրոցներէն նորբեր պէտք է մտնեն ձեմարան, կրթուելու, հայ դառնայու

Համար: Ուստի ԳԹ. Խաչի ՇՐՋ. Վարչութեան կոչին ձայնակցելով կը խնդրենք որ Պատ. Պատգ. Ժողովը այդ ցերեկեայ ուսանողներու համար յատկացուած գումարը գոնէ կրկնապատկէ: Ասով Միութիւնը կատարած պիտի ըլլայ մեծագոյն քարոզութիւնն ու դրական գործը հայ Ժողովուրդը հայ պահելու տեսակէտով: Ողջունելով ձեզ բոլորդ եւ յաջողութիւն մաղթելով ձեր գործին,

Մնամ յարգանքով
Հիմնադիր Տնօրէն Մեսրոպեան ձեմարանի
ԳԻՈՐԳ ՄԵՍՐՈՊ

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

ՊՈՒԼԿ. ԳԹ. ԽԱՉԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1930 ՅՈՒՆԻՍ 1 — 1931 ՅՈՒՆԻՍ 20

Մ Ո Ւ Տ Ք

Պատրաստ գումար նախորդ շրջանէն	12,918.00
Մասնաճիւղերու ցենզը անցեալ տարի	3,847.00
Մասնաճիւղերու ցենզը այս տարի	23,000.00
Անդամավճարներէն	11,849.00
Ստամբուլի աղէտեալներու առթիւ հանգ.	9,447.00
Սիւրիա — Պէյրութի օժանդակութիւն	1,050.00
Ամերիկայի Կ. Վարչութեան (150 տոլ.)	20,700.00
(Մեսրոպեան ձեմարանի նպաստ)	
Ամերիկայի Կ. Վարչութեան (50 տոլար)	6,900.00
(Խասքովոյի վարժարանին նպաստ)	
Ամերիկայի Կ. Վարչութեան (50 տոլար)	6,750.00
(Ասեղնագործութեան համար)	
Նուէր պրն. Մ. Պ. Էն	50.00
Վերադարձուած գումար Ատենադպիրէն	112.00

Գումար՝

96,623.00

Լէվա

Ե Լ Ք

Լէվա

Դիւանական ծախսեր	3,740.00
Պատգմ. Ժողովի ծախսեր	1,136.00
Կեդր. Վրչթ.եան 1930ի ցէնզի հաշուէն	3,850.00
Կեդր. Վրչթ.եան 1931ի ցէնզի հաշուէն	3,000.00
Նպաստներ	4,500.00
Փրօփականտի	3,336.00
Կրթական գործի	28,068.00
Ձեռագործներու պատրաստութեան	5,901.00
Ահարոնեանի յորելեանին	500.00
Ստամբուլի աղէտեալներուն	9,800.00

63,831.00

32,792.00

Գումար՝

96,623.00

ԹՐԱԿԻԱ-ՄԱԿԵԴՈՆԻԱ

Ժ. Ընդհ. Ժողովի վճռական որոշումով, այս շրջանը ճանչցուեցաւ եւ հռչակուեցաւ իբրեւ Հայ Կ. Խաչի առանձին շրջան, առանձին ՇՐՋ. Վարչութիւնով մը, հաստատուած Սելանիկի մէջ եւ վաւերացուած մեզմէ:

Հին եւ Նոր Յունաստանի ՇՐՋ. Վարչութիւնները, մեր հրահանգին վրայ, դժեցին իրենց սահմանները, փոխադարձ համաձայնութեամբ, ըստ որուն, Սելանիկի ՇՐՋ. Վարչութեան անցան Բոմօթինէի, Տրամայի եւ Սէրէզի մասնաճիւղերը, որոնք աշխարհագրական դիրքով աւելի մօտիկ են Թրակիոյ-Մակեդոնիոյ Շրջանային Վարչութեան եւ անոր սահմաններուն մէջ կ'ըլլան:

ՇՐՋ. Վարչութիւնը յարաբերութիւն հաստատեց այդ վերջին 3 մասնաճիւղերուն հետ: Բացի այդ ջանքեր ի գործ դնել սկսաւ, մասնաճիւղեր կազմելու համար Քափալայի, Տրամայի եւ Տէտէ Աղաճի մէջ:

2280-2011



Դեկտեմբեր ամսուան սկիզբները, ձմրան նախամուտին, Շրջ. Վարչութիւնը Սեւանիկի մէջ օգնեց աղքատ հիւանդներուն, տալով բժշկական խնամք, ձրի դեղ և բացարձակ չքաւորներուն յատկացնելով սնունդի դրամ: Յաջողեցաւ նաեւ, դաղթականական հիւանդանոցին մէջ զետեղել կարեւոր թիւով հայ հիւանդներ: Կանոնաւորապէս վճարեց Ֆրանսական տեղւոյն վարժարանին մէջ էր մէկ սանին. ասոր զուգընթաց, նպաստեց դաղթական եւ որբ սղոց:

Դանիմարքական եւ Շուէտական միսիոնները լքած ըլլալով իրենց խնամքին ենթակայ կարգ մը աշակերտութիւնն ու ամբողջական քանի մը թաղամասերու տեղական դպրոցները, Սեւանիկի մէջ Շրջ. Վարչութիւնը ծրարած եւ խելոյն ձեռնարկած էր Նէափոլիս թաղամասին մէջ բանալու հայ դպրոց մը, մօտ 30 փոքրիկներու համար, ինչպէս նաեւ Կիւմիլճինայի Մասնաճիւղի խնամած աղքատ դպրոցականներուն օգնելու եւ կէսօրուան ճաշ տալու զիմովը ստացած էր նոյն Շրջ. Վարչութիւնը: Իրենց ուղարկեցինք 200 տոլար, վերոյիշեալ պէտքերուն համար: Իսկ Շրջ. Վարչութիւնն եւս, իր կարգին, տեղական հասոյթներով, պիտի հոգար ուսուցչուհիի թոշակը եւ այլ կարգի պիտոյքներ:

Սեւանիկի Անաթոլիա Գոլէճին մէջ, երկրորդ տարին է որ կ'օժանդակենք ու կը պահենք որդեգիր-սան մը:

Թրակիոյ-Մակեդոնիոյ շրջանին մէջ կայ ուրիշ շարժում մը եւս, տեղւոյն Թեմական Ժողովի զբաղման առարկայ եւ այժմ մէականօրէն հետապնդելի: Այդ՝ Մակեդոնիոյ մէջ ցրուած 500 որբերու տեղափոխման հարցն է դէպի Սիւրիա, ուժացման եւ թշուառացման սահմաններէն դուրս աւելի ապահով վայրը ներկայիս:

Այս հարցն եւս կը յանձնենք ժողովիդ ուշադրութեան, յարակից վաստաթուղթերով միատեղ:

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

Հ. Գ. Խ.-ի ՍԵՂԱՆԻԿԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1 ՅՈՒՆՈՒԱՐ, 1930 — 31 ՄԱՅԻՍ, 1931

ՇՐՋԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՆԻԹԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆՑ

Մ Ո Ւ Տ Ք

Պնակներէ հասոյթ	5,414.00	
Անգամավճարներէ	6,747.50	
Նուիրատուութիւն	100.00	
Պոստոնի կերպոնէն ստացուած	15,347.00	
Հանդէսներէ	967.50	
	<hr/>	
Գումար՝		28,576.00

Ե Լ Ք

Սիւրիոյ կարօտեալներուն	1,000.00	
Գրենական պիտոյք	870.70	
Նպաստ սնունդի համար	4,225.00	
Կօշիկ, հագուստեղէն կարօտ դպրոցականներու	1,530.00	
Գրենական պիտոյք, կարօտ դպրոցականներու	1,250.00	
Դեղօրայք	6,080.80	
Փօսթ եւ դանազան	533.80	
Մաներու թոշակ	2,440.00	
Գոյք	102.00	
Միութեան վաւերացման ծախք	650.00	
	<hr/>	
Պատրաստ դրամ		18,682.30
		9,893.70
	<hr/>	
Գումար՝		28,576.00

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Յունուար 25-ին, Շրջանը գումարեց իր արտակարգ Պատգամաւորական Ժողովը, «Զաւարեան» շէնքի սրահին մէջ:

Արտակարգ Պատգամ. Ժողով, որովհետեւ Շրջ. Վարչութիւնը չկարենալով տոկալ նիւթական ծանր պայմաններուն եւ գտնուելով յուսահատ կացութեան մը առջեւ, որոշած էր իր հրաժարականը տալ եւ այդ առթիւ Շրջաբերականով Շրջանի մասնաճիւղերը արտակարգ Պատգամ. Ժողովի հրաւիրած էր:

Շրջանային Վարչութիւնը այս անգամ ընտրուած է Կանոնադրային-Օրագրային տրամադրութեանց համաձայն, իր մեծամասնութեանը մէջ ընկերուհիներէ — 5 ընկերուհիներէ եւ 2 ընկերներէ կազմուած: Տարեշրջանի սկիզբը, Ընդհ. Ժողովի որոշումներէն եւ Օրագրային տրամադրութեանց թելադրականութենէն առաջնորդուած, մենք ուղարկած էինք այդ Շրջանին մեր դիտողագիրը, ա) որ իրենց Շրջ. Պատգամաւորական Ժողովներուն կը մասնակցին բացարձակ մեծամասնութեամբ այլ-մարդ պատգամաւորներ (անցեալ Պատգամ. Ժողովին միայն 3 ընկերուհիներ մասնակցած էին), եւ բ) որ Շրջանային Վարչութիւնը մէկ բացառութեամբ դարձեալ կազմուած էր այրերէ: Թելադրած էինք, որ յաջորդական Շրջ. Ժողովներուն սրբագրեն այդ աչքառու վրէպը:

Նորընտիր Վարչութիւնը ճիշդ օրին վաւերացուցինք:

Անոնք գործի լծուեցան մեր քաջալերութիւնը եւ վստահութիւնը, ըստ օրինի ունենալով իրենց հետ: Ձեռնարկներ սարքեցին. Գասանմեակը տօնեցին մեծ շուքով եւ իրենց մասանճիւղերը գործի լծեցին: Ուլարկեցինք իրենց, երկու առաքումով, 600 տոլար, իրենց ամբողջական պիւտճէն եւ խնդրանքի վրայ, խոստացանք հնարաւորութեան պարագային գումար մը եւս հայթայթել իրենց, առանձնապէս Զաւարեանի մեր որդեգիր-ուսանողներուն եւ ուսուցչութեան յետեւ թոշակներուն համար: Բարեբախտաբար, Քանատայի Վինտզըր քաղաքի հայ դպրութիւնը, բոլորովին ինքնաբերաբար, իր մէջ հանգանակեց 80 տոլար եւ 43 սէնթի գումար մը եւ մեզի տրամադրեց յատուկէն Զաւարեանի որդեգիրներուն համար: Այդ գումարը նոյնութեամբ եւ իսկոյն հաս-

ցուցինք նպատակին, Յունիսի սկիզբը ճամբայ հանելով, — որով §680.43 զրկած եղանք Շրջանի դպրոցական կարիքներուն:

ԶԱՒԱՐԵԱՆ ՇԷՆՔԻ ՀՈՂԻ ԳՆՄԱՆ ՀԱՐՅԸ

10-րդ Ընդհ. Ժողովի որոշման համաձայն, Շաւարշ Միսաքեանի նախագահութեան ներքեւ կազմեցինք լիազօր քննիչ յանձնախումբ մը, քննելու եւ վերջնական կարգադրութիւն մը ընելու հողի դնին ու տարածութեան մասին:

Յանձնախումբին զեկոյցը ստացանք Դեկտեմբեր 16-ին, որով կը պարզուէր թէ հողի տարածութիւնն է 1233 քառակուսի կանգուն եւ կ'արժէ մօտ երկու հազար տոլար: Վարչութիւնը այս տարեշրջանին զրկեց 1200 տոլար: Մնացած 800 տոլարը կը թելադրենք որ յաջորդ Վարչութիւնը առաջին առիթով զրկէ եւ փակէ այս հաշիւը միանգամ ընդմիջտ:

Յունաստան տեղական պատճառներով չկրցաւ գումարել իր շրջանի Պատգամ. Ժողովը, հետեւաբար ձեռքի տակ չունինք անոնց որոշումներն ու տեղեկագրերը: Շրջ. Վարչութիւնը, սակայն, հասցնելու համար Ընդհ. Ժողովին Յունաստանի շրջանին առաջարկներն ու կարիքները, առանձին տեղեկագիր մը պատրաստած եւ զրկած է, զոր կը ղենեք Ժողովիդ տրամադրութեան տակ:

Յունաստան նմանապէս ունի կրթական, առողջապահական եւ տնտեսական պէտքեր, որոնց համար տեղւոյն վրայ կ'աշխատին իրենց կարելին ի գործ դնել: Կեդր. Վարչութիւնս կը թելադրէ պահել մեր օժանդակութիւնը Յունաստանի դպրոցներուն, մասնաւորապէս Զաւարեան վարժարանին:

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ

Հ. Կ. ԽԱՉԻ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

25 ՅՈՒՆՈՒԱՐ 1931 — 27 ՅՈՒՆԻՍ 1931

Մ Ո Ւ Տ Ք

Ամերիկայէն հասած	23,000.00
Յրանսայէն, ընկ. Շաւարշէ, Ա. անգամ	15,000.00
Յրանսայէն, ընկ. Շաւարշէ, Բ. անգամ	15,000.00

Դպրոցի օրի հասոյթ	9,875.00	
Պնակի հասոյթ	394.50	
Բարազամեան Եղբայրներէ նուէր	575.00	
Փոխան ծաղկեպտակի նուէրներէ	1,350.00	
Թատրոնէ եւ հանգէսէ	1,816.00	
	<hr/>	
Պատրաստ		67,010.50
		708.00
		<hr/>
Գումար՝		66,302.50

Ե Լ Ք

Զաւարեան վարժարանի ցէնդ	30,971.00	
Ամբարուսի վարժարանի ցէնդ	6,250.00	
Լավրիօնի վարժարանի ցէնդ	3,000.00	
Քամարիձայի վարժարանի ցէնդ	1,050.00	
Քալամաթայի վարժարանի ցէնդ	5,000.00	
Ֆիքզի վարժարանի մնացած ցէնդը	800.00	
Լիբազմայի վարժարանի հաշտոյն	500.00	
	<hr/>	
Քարտուղարի (հին պարտք)	47,571.00	450.00
«Նոր Օր»ի պահանջքէն (հին՝ 600ը նոր)	1,650.00	
«Նոր Օր»ի բաժնեզին Ամերիկայի	600.00	
Փօսթ, երթեւեկ, գրեհական, զանազան նպաստ	1,155.00	475.00
		<hr/>
Գրասենեակի վարձք (կէսը հին)	4,330.00	
20-ամեակի հանգէսի ծախք	2,000.00	
		2,026.50
		<hr/>
Գումար՝		66,302.50

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Ներկայ տարուան սկիզբէն դիմումներ կատարեցինք ուղղակի եւ անուղղակի միջոցներով մեզի կապելու համար տարիէ մը ի վեր Եգիպտոսի մէջ կազմուած Հայ Կ. Սաչը: Վերջին պահուն «Յուսարեր»ի խմբագրութենէն ստացած մեր նամակը ուրախութեամբ կ'իմացնէր մեզի որ ոչ միայն Գահիրէի Հ. Կ. Սաչը միացած է մեզի, այլ մեծ շուքով, Մայիս 20-ին, տօնած է նաեւ Հ. Սաչի Գասանամեակը:

Գահիրէի Հ. Կ. Սաչէն պաշտօնական հաղորդագրութիւն մը ստացած չենք տակաւին, սակայն վստահելի աղբիւրէ ըլլալով այս լուրը, կրնանք ըսել որ կատարուած իրողութիւն մըն է այլեւս, եւ մենք շատ ուրախ ենք որ Եգիպտոսի շրջանն ալ կապուեցաւ մեզի:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒԻՒՆ.— Այս տեղեկագիրը տպագրութեան յանձնելու ատեն ստացանք Եգիպտոսի Հ. Կ. Սաչի պաշտօնական գրութիւնը, տեղեկագիր եւ հաշուետուութիւն: Ստորեւ կուտանք ամփոփ պատկերը Եգիպտոսի Հ. Կ. Սաչի գործունէութեան:

1930 Մարտ 1-ին կազմուեցաւ Եգիպտոսի Հ. Կ. Սաչը: Գահիրէի մէջ գործող Հայուհեաց Միութիւնը իր 10-ամեայ շրջանը բոլորելէ յետոյ վերածուեցաւ Հ. Կ. Սաչի:

- Ընտրուեցաւ Վարչութիւնը հետեւեալ կազմով.—
- Տիկին Տ. Պալըզճեան (Ատենապետուհի)
 - Տիկին Ա. Պաղտիկեան (Գանձապետուհի)
 - Տիկին Հ. Նաւասարդեան (Ատենաղագրուհի)
 - Տիկին Զ. Եսայեան, Տ. Ա. Պօյաճեան, Տ. Ս. Զրադեան՝ խորհրդակիաններ:

Կարճ ժամանակուան ընթացքին անդամ-անդամուհիներու թիւը բարձրացաւ 40-45 հոգու:

Առաջին գործը եղաւ օգնութեան հասնիլ Սալմաստի երկրաչարժի աղէտեալներուն: Այս նպատակով հանգանակուեցաւ 87 եգ. ոսկի եւ փոխադրուեցաւ Թաւրիզ՝ Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք Թանգեանին՝ աղէտեալներուն յատկացնելու համար:

Հ. Կ. Սաչի Եգիպտոսի մասնաճիւղը գլխաւոր նպատակ ունենալով գերուած որր-որրուհիներու ազատագրման գործը (ա-

ուսուցիչ Վրջան) այս նպատակով մինչև այսօր 60 անգլ. սթ. փոխադրած է Իրաքի Գաղթականության լիազոր պրն. Լեոն Շաղոյեանի:

Ծննդեան տօներուն առթիւ՝ անցեալ տարի Պէյրուսի Հայ Ճեմարանին նուիրած է 20 անգլ. սթ., իսկ 10 անգլ. ալ յատկացուցած է Զանգեզուրի աղէտեալներուն:

Իրամական առաքումներէն բացի, 700 կտոր հին հազուստներ ժողոված եւ զրկած է Հավրէդքի դաղթականութեան: Նիւթական համեստ օժանդակութենէն բացի, Հ. Կ. Սաչը անգամ մըն ալ դաշտահանդէս կազմակերպեց «Համազգային»ի հետ եւ եկամտի իր բաժինն ալ ձգեց «Համազգային»ին:

Իրբեւ ձեռնարկ անցեալ տարի, Ծննդեան տօներուն կազմակերպած է պազար մը, քաղաքի լաւագոյն պանդոկին մէջ, ցուցադրելով հայ կանանց ձեռագործներ, իսկ պազարէն մնացած իրերը, վերջէն դրած է վիճակահանութեան: Տարուան մէջ 2 անգամ թէյասեղան կազմակերպած է առանց մուտքի, առաջինը՝ իրբեւ շնորհակալութիւն պազարի մասնակցողներուն, երկրորդը՝ Հ. Կ. Սաչի 20-ամեակի առթիւ:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԵԳԻՊՏՈՍԻ Հ. Կ. ԽԱՉԻ

Մ Ո Ւ Տ Ք

		եգ. ումիլ.
Անդամավճարներէ	6,037.00	
Նուիրատուութենէ	3,520.50	
Ձեռնարկներէ	8,080.00	
Հանգանակութենէ	8,753.50	
	<hr/>	
Գումար՝		26,400.00

Ե Լ Ք

		եգ. ումիլ.
Տպագրութիւն	1,300.00	
Հայ Ճեմարանին	1,950.00	
Ձեռնարկներ	4,415.50	

Սարմաստ	8,717.00
Զանգեզուր	1,000.00
Մոսուլ	5,625.00
Զանազան ծախքեր	1,687.50

	<hr/>	24,695.00
Պատրաստ գումար		1,705.00
	<hr/>	
Գումար՝		26,400.00

Ս Ի Ի Ր Ի Ա

Սիւրիա իր հոծ հայութեամբ ամենուս ուշադրութեան առարկայ դարձած է: Նախորդ տարուան ընթացքին, ինչպէս ձեզ յայտնի է, մեր Երջ. Վարչութեան եւ յատուկ գործիչի մը միջոցաւ՝ աշխատեցանք կազմակերպել այդ շրջանը: Այժմ Սիւրիոյ մէջ ունինք 17 մասնաճիւղեր, մօտ 700 անդամ-անդամուհիներով:

Սիւրիոյ մեր Երջ. Վարչութիւնը իր գործունէութիւնը կեդրոնացուցած է չորս կարեւոր ձեռնարկներու վրայ. գործեր, որոնք հիմքը կը կազմեն մեր ընդհ. նպատակներուն եւ ամբողջ հայութեան սրտին մօտիկ են: Ասոնք են.— Հայ բեկորներու ազատագրութիւնը, կրթական ու մշակութային աշխատանքներ, առողջապահական միջոցներու ստեղծում եւ Սիւրիահայութեան, մասնաւորապէս գիւղացիութեան ու նոր ազատագրուածներու անտեսական բարելաւում:

Սիւրիոյ Երջ. Վարչութիւնը այս չորս կարեւոր գործերու մասին խնամքով պատրաստուած զեկուցումներ ներկայացուցած է Սիւրիոյ Ա. Պատգմ. Ժողովին, որ գումարուեցաւ 1931 Ապրիլ 6-ին, Հալէպի մէջ: Պատգմ. Ժողովը համապատասխան որոշումներ կայացուցած եւ նախահաշիւ պատրաստած է, որոնց գործադրութիւնը առաւելապէս կախուած է մեր հասցնելիք օգնութենէն: Սիւրիոյ Երջ. Վարչութեան ներկայացուցած զեկուցումներն ու Պատգմ. Ժողովի որոշումները կը յանձնարարենք որ կարդան ո՛չ միայն այս ժողովի յանձնարարները, այլ եւ անհատ ընկերուհիները՝ մօտէն ծանօթանալու համար այն գեղեցիկ

աշխատանքին, որ կը կատարուի Սիւրբիոյ մէջ Հ. Կ. Խաչի միջոցաւ:

Այս տարեշրջանին մենք չկրցինք լիովին բաւարարել Սիւրբիոյ մեր Շրջ. Վարչութեան ներկայացուցած կարիքները, յառաջիկային սակայն, նկատի ունենալով որ հայութիւնը հետզհետէ կը կեդրոնանայ Սիւրբիոյ մէջ, եւ նկատի ունենալով նաեւ, որ մեր միւս շրջանները քիչ շատ ինքնաբաւ դառնալու վրայ են, Վարչութիւնս կը թելադրէ կրճատումներ ընել ուրիշ վայրերու պիւտճէէն եւ աշխատել բաւարարել Սիւրբիոյ կարիքները:

Հոս կուտանք քաղուածքներ՝ Սիւրբիոյ Ա. Պատգմ. Ժողովի որոշումներէն:

ՍԻՒՐԻԱ, ՀԱՅ ՕԳԵՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԻ Ա. ՊԱՏԳՄ.

ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1. ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐՈՒ

Կեդրոնական Վարչութիւնը ազատագրական, կրթական, առողջապահական, տնտեսական եւ կազմակերպչական հարցերու մասին զեկուցումներ պատրաստած ըլլալով, անոնք կարգացուցան:

Ա. Ազատագրական. — Կարգացուցեցաւ այս նիւթին չուրջ խրնամուած զեկուցում մը. ժողովը իւրացուց զայն եւ քուէարկեց 2,000 տոլարի պիւտճէ մը, նկատի ունենալով մէկ տարուան ընթացքին ազատագրումը 100 հոգիի:

Բ. Կրթական. — Կարգացուցեցաւ այս մասին պատրաստուած զեկուցումը, զոր ժողովը ընդունեց եւ որոշեց.

1. Ստեղծել մշակութային մնայուն յանձնախումբ մը, անոր տալով որպէս ուղեգիծ.

ա. Ընդհանուր եւ միօրինակ ծրագիր ամէն հայ վարժարաններու համար, ջանալով զայն կարելի չափով եւ միջոցներով ընդունիլ եւ կիրարկել տալ:

բ. Այս ծրագրին իրրեւ հիմնական սկզբունք տալ հայրենի կրթութիւն եւ միաժամանակ գործնական եւ գրական զարգացում:

գ. Արդէն գոյութիւն ունեցող կրթական հաստատութիւններու եւ ուսուցչական դանազան մարմիններու հետ յարաբերութիւն պահել, օգտուելու համար տրամադրելի ուժերէն եւ ազգակներէն:

2. Զախահասներու կրթութեան համար հիմնել գիշերային դասընթացքներ, գրադարաններ, ու սարքել լսարաններ: Այս նպատակի իրագործման համար ժողովը քուէարկեց 50 ոսկիի պիւտճէ մը:

3. ա. — Հասիչէի, Գամբլուի եւ Թէլ Պրաքի մէջ բանալ Ս. Օ. Խաչի անունով դպրոցներ, եւ այս նպատակին յատկացնել 150 ոսկի:

բ. — Շրջանի բոլոր դպրոցներուն յատկացնել դպրոցական դանազան պիտոյքներ, ընդամէնը 30 ոսկի արժէքով:

գ. — Դպրոցական նորոգութեանց, դպրոցական նոր շէնքերու շինութեանց եւն.ի համար յատկացնել 80 ոսկի:

դ. — Վերոյիշեալ երեք դպրոցներէն դատ, շրջանի մնացած բոլոր դպրոցներուն յատկացնել 190 ոսկի նպաստ:

Գ. Առըշապահական. — Այս նիւթի չուրջ Կեդր. Վարչութեան զեկուցագիրը կարգացուցեցաւ եւ ժողովը որոշեց.

1. Պայքարիլ մայրիւնայի, աչքի հիւանդութեանց եւ մանուկներու մահացութեան դէմ:

2. Թոքախտաւորներուն բարոյապէս աջակցել եւ ջանալ մեկուսացնել զանոնք:

3. Մնացած հիւանդութիւններուն հակազդել, հնարաւոր միջոցներով:

4. Թելադրել Կեդր. Վարչութեան, ապահովել հայ բժիշկներու բարեացակամութիւնը, դանազան հիւանդներ քննել եւ դարմանելու ուղղութեամբ, երբ անոնք յանձնարարուին մեր կողմէ: Առողջապահական ծախս որոշուցեալ 160 ոսկի:

Գ. Տնտեսական. — Կարգացուցեցաւ Կեդր. Վարչութեան այս մասին զեկուցագիրը եւ միաձայնութեամբ որոշուցեցաւ.

1. Պէյրութ, Հալէպ եւ բոլոր այն վայրերը ուր հնարաւոր է հիմնել աշխատանքի գրասենեակներ, եւ այս նպատակին յատկացնել 100 ոսկի:

2. Արհեստաւորներու գործիք հայթայթել եւ փոխատուու-

թիւն ընել զանոնք ինքնարաւ դարձնելու համար, եւ այս նպատակին յատկացնել 100 ոսկի:

3. Հիւսիսային Սիւրիոյ հայ գիւղացիներուն երկրագործական միջոցներ եւ պիտոյքներ հայթայթել, Կեդր. Վարչութեան խողովակով:

4. Սուէտիոյ շրջանը ենթարկել քէֆնիք ուսումնասիրութեան եւ այս նպատակին յատկացնել 30-40 ոսկի: Ուսումնասիրութեանէն վերջ, Կեդր. Վարչութիւնը միջնորդ հանդիսանայ, նախատեսուած գումարը հայթայթելու, գլուխ հանելու համար ոռոգման եւ այլ կարգի ծրագիրները:

Ե. Կազմակերպական. — Կեդրոնական Վարչութեան կողմէ բերանացի գեկուցում եղաւ կազմակերպական խնդիրներու մասին, որուն վրայ ժողովը որոշեց.

1. Պէյրութի մասնաճիւղին որոշ իրաւասութիւններ տալ եւ Լիբանանի մարմիններուն իրրեւ կեդրոն պահել զայն:

2. Մասնաճիւղերը պէտք է իրենց գործունէութիւնը տանին Կեդր. Վարչութեան տուած հրահանգներուն համաձայն:

3. Սուէտիոյ բոլոր գիւղերուն մասնաճիւղերը կապուին մէկ կեդրոնի, պահելով թուական համեմատութենէն բխող ձայնի իրաւունքը, տարեկան պատգամաւորական ժողովներու առթիւ:

4. Եթէ հնարաւոր չըլլայ գործիչ պահել, Կեդր. Վարչութիւնը իր անդամները, գէթ տարին երկու անգամ, շրջապաշտութեան հանէ:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՍԻՒՐԻԱ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԻ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Մինչեւ 31 ՄԱՐՏ, 1931

Մ Ո Ւ Տ Ք

Օսմ. ոսկի 100-էն

1929, նոյեմբեր 14 թիւ նամակով Ամերիկայի Կեդրոնէն ստացուած 1000 տոլարնոց չէքի փոխարժէքը	22,985.00
1930, Ամերիկայի Կեդրոնէն ստացուած երկրորդ 1000 տոլարնոց չէք	23,020.00

1930 մինչեւ 1930 Դեկտ. 31, սեղանաւոր Քէրիմ Պալի քով գտնուած դրամէն գոյացած տոկոս	964.00
1930 մինչեւ 1930 Դեկտ. 31, Ասորինէրու քէմբի վարժարանի աշակերտներէն գոյացած հասոյթ	123.00
1931 վարժարանի աշակերտներէն գոյացած հասոյթ	71.42
1931 դրամական տարբերութենէ	4.54
Գումար՝	47,167.96

Ե Լ Ք

Օսմ. ոսկի 100-էն

Առողջապահականի	9,623.07
Կրթականի	25,149.10
Որբահաւաքման	4,538.62
Տնտեսական	997.00
Դիւանական	2,088.32

42,396.11

1931 Մարտ 31-ին պատրաստ 4,771.85


Գումար՝ 47,167.96

ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԸ ԵՒ ՀԱՅ Կ. ԽԱՉԻ

ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ՈՒ ԵՐԹԵՒԵԿ ՍՍՆ-ՍՍՆՈՒ ՀԻՆԵՐԸ

Տարւոյն սկիզբէն, ըստ Ժ. Ընդհ. Ժողովի կայացուցած որոշման, մեր յատկացնելիք 2000 տոլարին ի փոխարէն, որդեգրեցինք սան-սանուհիներ, Պէյրութի Հայ Ճեմարանին մէջ:

Տեղւոյն վրայ կազմեցինք Եռանդամ Խնամակալ Յանձնախումբ մը, որուն տուինք իրաւունք եւ յայտնեցինք վստահութիւն, զատելու մեր հաշւոյն չքաւոր սանուհիներ եւ ընտրովի, ընդունելու զանոնք ճեմարանէն ներս: Այս գործը կատարուեցաւ



Հ. Կ. Խաչի Սան-Սամուէլիները Հայ Ճեմարանին մէջ

ըստ մեր փափաքին եւ ներկայիս 27 սան-սանուհիներ կան, 6-ը գիշերօթիկ եւ 21-ը ցերեկեայ երթեւեկներ :

Պէջրութի մեր Խնամակալութեան զեկոյցը եւ ձեմարանի հիմնադիրներուն, Լեւոն Շանթի եւ Ն. Աղբալեանի նամակը ուղղւած ժԱ. Ընդհ. Ժողովին, կ'ուզենք կարգալ հոս : Ստացած ենք մեր որդեգիրներուն տարեկան տեղեկագիր-վիճակացոյցը, անոնց կարողութեան, ջանասիրութեան եւ վարքի պատկերը առանձին-առանձին տեղեկագրուած : Հասած են մեզ նաեւ մեր որդեգիրներու նկարները, որոնք յարմար առիթով մը կը թելադրենք հրատարակել «Հայրենիք»ի մէջ :

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻՆ ԿՈՂՄԷ

Վարչութեանդ 1930 Օգոստոս 4 թուակիր նամակին համաձայն կազմուած եռանդամ խնամակալութիւնս մինչեւ հիմա ունեցած է հինգ նիստ, որու ընթացքին եղած են հետեւեալ կարգաբաժնիները .

1. Հայ Կարմիր Խաչի Ժ. Ընդհանուր Ժողովին կողմէ քուէարկուած դումարին կէսը միայն յատկացնել գիշերօթիկներու այս տարի, միւս կէսով պահել 22 երթեւեկ, երթեւեկ ընդունուելու համար եղած բազմաթիւ կարօտ աշակերտներու դիմումները բաւարարելու եւ աղջիկները բոլորովին զրկած չըլլալու համար Հայ Կարմիր Խաչի օժանդակութենէն, քանի որ ձեմարանը այս տարի ունենալու չէ աղջիկներու գիշերօթիկ բաժին :

2. Լիրանանի ու Սիւրիոյ հայաշատ կեդրոնները դիմելով խնդրած ենք յարմար ընտրելիներ մասնանիչ ընել մեզի, իբրեւ Կարմիր Խաչին արժանի որդեգիրներ, եւ ատոնց մէջէն է, որ ընտրած ենք Հայ Կարմիր Խաչի հինգ գիշերօթիկները . իսկ երթեւեկները մեծ մասով ընտրուած են տեղիս Ազգային Վարժարանի աւարտականներէն կամ քէմփի Սահակեան վարժարանէն, մաս մըն ալ մօտաւոր ու հեռաւոր այլ կրթական կամ բարեգործական հաստատութիւններէ :

Ձեր սաներու վիճակը, տարիքը, դասարանական կազմը, սրտեղացի ըլլալը եւ իրենց կարողութիւնները ցոյց տուող ցանկերը Հայ Ճեմարանի տնօրինութեան կողմէն ղրկուած են արդէն Վարչութեանդ, ինչպէս եւ ձեր բոլոր որդեգիրներուն խմբական լուսանկարները ձեմարանի միւս նկարներուն հետ միասին :

3. Հայ Կարմիր Խաչի որդեգիրներուն դասադրքերը հայթայթուած են ընկերական օգնութեամբ, այսինքն գրածախնէրէն որոշ գեղջով գնուած գիրքերը աշակերտներուն ծախուած են քիչ մը աւելի արժէքով, մնացած շահովը ձրի գիրք է տրուած ձեր սաներուն :

4. Հայ Ճեմարանի երեք ուսուցչուհիները, որոնցմէ մէկը Խնամակալութեանս անդամ տիկին Հեղուշ Փափաղեան, այցելած են Հայ Կարմիր Խաչի որդեգիրներուն տները. եւ անոնցմէ ամենէն աւելի կարօտներուն որոշ թեթեւացում տալ կարողանալու համար՝ Խնամակալութիւնս դիմած է Պէյրութի Հայ Օգնութեան Խաչին, որ եւ սիրայօժար տրամադրած է Խնամակալութեանս հարիւր սիւրիական ոսկի. այդ գումարը գործադրուած է իբրեւ 8 հոգիի երթեւեկի ծախք (63.60), եօթը աղջկան գլխարկի եւ տղու մը հագուստի օժանդակութիւն (11.75), 5 հոգիի դեղ եւ ատամնարուժի (8.15), այլ եւ գիրք ու դպրոցական պիտոյքներ (16.50) :

Ձեր սաներէն մէկը դպրոցիս բժիշկին յայտարարութեամբը անհրաժեշտ էր լաւ սննդել. մօտ 2 ամիս սեղանակից եղաւ այդ տղան գիշերօթիկներուն ձեմարանի տնօրինութեան մասնաւոր կարգադրութեամբ. ուրիշ որբի մը սնունդը հոգաց Պէյրութի Օգնութեան Խաչը մօտաւորապէս 5 ամիս. իսկ երրորդ մը, որ նմանապէս երկարատեւ խեղճ սնունդի հետեւանքով թոքային տկարութիւն ստանալու սպառնալիքին տակն է, Խնամակալութեանս կողմէն ներկայացուած է Հայ Օգնութեան Խաչին, որ այդ տղան նախ մասնագէտ բժշկի մը քննութեանը ենթարկուի եւ եթէ հնար է միջոց ստեղծուի, որ ամառը մէկ-երկու ամիս անցընէ լեռները :

Փորձը ցոյց կուտայ, որ ընտանեկան յարմարութիւններէ եւ կանոնաւոր սնունդէ գուրկ ու կարօտ տղոց ուսման վճարը հոգալը քիչ օգուտ տուող գործ է. քիչ-միչ ապրուստի տէր եղող ըն-

տանիքի զաւակներուն համար միայն կարելի է այդ ձեւի օգնութիւն ընել, ան ալ գլխաւորապէս աղջիկներուն, որոնք դիշերօթիկ ըլլալու հնարաւորութիւն չունին առայժմ. իսկ Հայ Կարմիր Խաչի ընելիք օգնութեան համար ամենէն արդիւնաւէտ ձեւը գիշերօթիկ վերցնելն է. թէ՛ սնունդը, թէ՛ միջավայրը, թէ՛ կեանքի ու աշխատանքի կանոնաւորութիւնը հիմնապէս կ'ազդեն ե՛ւ տղոց առողջութեան վրայ, ե՛ւ վարք ու բարքին, ե՛ւ աշխատունակութեան :

Այս զեկուցումը խմբադրուած է Խնամակալ Յանձնախումբիս հինգերորդ նիստին մէջ 1931-ի Յունիս 9-ին, Պէյրութ :

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ
ԲԺ. Հ. ՓԱՓԱՋԵԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԺԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Յարգո՛յ Հայրենակիցներ. — Ահա՛ այս երրորդ Ընդհանուր Ժողովն է, որուն ներկայանալու պատիւը ունինք երկու ստորագրողներս : Երկու տարի առաջ Թ. Պատգամաւորական Ժողովին ծրագիր մըն էր դեռ, որ կ'առաջարկէինք՝ խնդրելով ձեր օժանդակութիւնը սկսիլ կարողանալու համար : Անցած տարի Ժ. Ընդհանուր Ժողովին կը ներկայանայինք գործին հիմքը դրած իրաւապէս, կառավարութենէն վաւերացուած եւ արդէն բացած դասարան մը 15 աշակերտով : Հիմա կը ներկայանանք ԺԱ. Ընդհանուր Ժողովիդ արդէն իրական դպրոցով մը, միջնակարգ վարժարանի մը միջին չորս կարգերով եւ 63 աշակերտներով, որոնցմէ 12-ը գիշերօթիկ. ամբողջ ուսումնական տարեշրջան մը բոլորած է մեր հաստատութիւնը կատարեալ կանոնաւորութեամբ ու սիսթեմատիկ ծրագրով. գիշերօթիկները ունեցած են առանձին բնակարան համալսարանական վարիչի մը հսկողութեան ու խնամքներուն տակ կեանքի ամէն յարմարութիւններով :

Անչափ ուրախ ենք, որ մեր դիմումները ընդհանուր ժողովներու մէջ անարձագանգ չմնացին եւ դուք տուիք մեզի հնարաւորութիւն ե՛ւ հիմնելու ե՛ւ բարձրացնելու այս հաստատութիւնը,

որ արդի գաղութահայ իրականութեան ամենէն առաջին պահանջներէն մէկն է: Յառաջիկայ Հոկտեմբերէն Հայ ձեմարանը պիտի ունենայ հինգ կարգ, որով կը լրանայ հաստատութեանս դասարանական շրջանը. յաջորդ տարիները հետզհետէ կը բացուին մեր երեք լսարանները երեք ձիւղերով, այսինքն մեր ձեռնարկին ամենէն կարեւոր մասը: Յառաջիկայ տարուան համար մեր աշակերտներուն ընդհանուր թիւը կ'ենթադրենք 85-90 հոգի, որուն մէջ 30 հոգիի չափ գիշերօթիկ:

Փորձը ցոյց տուաւ, որ գիշերօթիկները թէ՛ վարքի, թէ՛ ընաւորութեան, թէ՛ ջանասիրութեան եւ թէ՛ իրենց աշխատանքի արդիւնքին տեսակէտէն մեծ առաւելութիւններ ունին բաղդատմամբ երթեւեկներուն. ձեմարանիս վարչութիւնը՝ ձեր նշանակած իննամակալ Մարմինն հետ համախորհուրդ՝ կը ցանկայ նուազեցընել Կարմիր Սաչիդ երթեւեկ սաներուն թիւը եւ աւելցնել ընդհակառակը գիշերօթիկները: Եւ անչափ ուրախ ենք, որ Կարմիր Սաչի Կեդրոնական Վարչութիւնը նախաձեռնած է արդէն զիմումներ կատարելու հող զանազան ունեւոր անձերու կամ միութիւններու՝ դրդելով որ անոնք գիշերօթիկ սաներ պահեն մեր ձեմարանին մէջ: Արդ՝ ըլլայ այդ զիմումներուն իբրեւ հետեւանք, ըլլայ ձեր դանձին անմիջական օժանդակութեամբը, անհրաժեշտ է, որ Կարմիր Սաչիդ ձեռնտուութեամբը Հայ ձեմարանին մէջ պահուող գիշերօթիկ որդեգիրներուն թիւը հասնի գոնէ 15-ի: Այն ժամանակ ձեր արդի երթեւեկ սաներուն մէջէն մէկ-երկու տկարները հեռացնելով, քանի մը արժանաւորները գիշերօթիկ դարձնելով, երթեւեկներուն թիւը կրնանք իջեցնել 10-11-ի: Այսչափ մը պահել անհրաժեշտ է՝ աղջիկները բոլորովին զրկած չըլլալու համար Կարմիր Սաչիդ թանկազին օժանդակութենէն. որովհետեւ այս տարի ալ աղջիկներու համար գիշերօթիկ բաժին չենք ունենալու: Մեր յառաջիկայ տարուան պիտոճէին մէջ Կարմիր Սաչի կեդրոնիդ հաշուին դրած ենք 15 գիշերօթիկ եւ 11 երթեւեկ, որ ըսել է ձեզմէ կամ ձեր միջոցով կ'ակնկալենք 3500 տոլարի աջակցութիւն մը, որուն եւ վաւերացումը կը խնդրենք Ընդհանուր Ժողովիդ քուէէն:

Ձեզի մեր դրամական վիճակի մասին ամփոփ գաղափար մը տուած ըլլալու համար՝ յայտնենք, որ գալ ուսումնական տար-

ուան մէջ իբրեւ ծախք կը նախատեսենք 3000 օսմանեան ոսկի, որուն 2000-ը ուսումնական բաժնին վրայ եւ 1000-ը գիշերօթիկներու բաժնին վրայ: Այդ գումարին դէմ մեր հաշուով 1265 ոսկին կը ստանանք աշակերտներու վճարէն (Կարմիր Սաչը մէջը չհաշուած), 785 ոսկի (այսինքն 3500 տոլար) Հայ Կարմիր Սաչիդ որդեգիրներէն. մնացած 950 ոսկին ալ ձեռք ենք բերելու Համագրայինի անմիջական օժանդակութեամբն ու ջանքերովը:

Մեր գործի անկախացումը հիմնուած է գիշերօթիկներու թուին աստիճանական յաւելմանը վրայ. ինչքան շատերը իրենց դաւակը զանազան վայրերէ գրկեն մեզի գիշերօթիկ, եւ ինչքան շատ հաստատութիւններ ու անհատներ իրենց հաշուով որդեգիրներ պահեն մեր հաստատութեան մէջ, այնքան մեր գործը շուտով ինքն իր ոտքերուն վրայ կը կենայ եւ քիչ պէտք կ'ունենայ թէ՛ Կարմիր Սաչի եւ թէ՛ Համագրայինի անմիջական օժանդակութեան, այնքան ալ բնական ու առողջ պայմաններ կը ստեղծուին մեր գործի զարգացման համար: Բոլոր նշաններէն կ'երեւայ, որ ինքնավճար գիշերօթիկներու թիւը աստիճանաբար բարձրանալու է, բայց դանդաղօրէն. Պարսկաստանէն շատերը կան, որ գալ կ'ուզեն, բայց պետական արգելք կայ դրամ արտահանելու. եւ դեռ չենք բացած բոլոր դասարանները. եւ վերջապէս դպրոցն ալ իր տեսակի Ֆիրմա մըն է, որ կամաց-կամաց վստահութիւն կը ներշնչէ, նախ գործը տեսնել կ'ուզեն մարդիկ եւ գործի տեսակալութեանը վստահանալ կ'ուզեն. թէեւ ուրախ ենք յայտնելու Ընդհանուր Ժողովիդ ճակատարաց, որ համակրանքն ու գնահատանքը չի պակսիր մեր շուրջը մեր հաստատութեան հանդէպ, եւ յարգանքն ու վստահութիւնը օր-օրի կ'աճին: Մեզի այնպէս կը թուի, որ մեր ամենէն ծանր շրջանը նախորդ ու այս տարիներն են, որ կերպ մը անցընելու վրայ ենք՝ կրթնած միմիայն Համագրայինի ու Կարմիր Սաչիդ վրան: Ասկէ ետքը աստիճանաբար դիւրանալու է, կը յուսանք, մեր հաստատութեան վիճակը, որով վստահ ենք կամաց-կամաց կը թեթեւցենք նաեւ ձեր վրայ դրած մեր բեռը. բայց յառաջիկայ երկու տարիները դեռ պէտք ունինք ձեր մեկնած ամուր բաղուկին, մինչեւ որ մեր վարկն ու գործը վերջնապէս ամրացնենք, մինչեւ որ բանանք մեր բոլոր դասարանները, որով եւ ունենանք ատոր համեմատ աշակերտու-

Թեան լրիւ թիւ թէ՛ երթեւեկ թէ՛ դիշերօթիկ: Հայ ձեմարանը կրօնաւ հիմք դնել Հայ Կարմիր Սաչի օժանդակութեամբ. եւ անկաւ իր սեփական ուժերուն տիրանալու, անկախ ու լրիւ միջնակարգ վարժարան մը դառնալու համար քիչ մըն ալ պէտք ունի դեռ ձեր լուրջ աջակցութեան. եւ մենք վստահ ենք, որ ԺԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կ'ընէ իր հնարաւորը՝ իր առաջ քաշած գործը իր բնական զարգացմանը հասցնելու, կենսունակ, կարող եւ ինքնաբաւ հաստատութիւն մը դարձնելու համար:

Մեր ջերմ ու սրտազին բարեւները կը դրկենք Հայ Կարմիր Սաչի ԺԱ. Պատգամաւորական Ժողովին, կը մաղթենք բոլոր սրտով յաջողութիւն ձեր աշխատանքին, եւ իրականացում ձեր բոլոր որոշումներուն եւ ձեռնարկներուն, որոնցմէ մէկը ըլլալու բախտը ունի մեր Հայ ձեմարանը:

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

1931, Մայիս 15, Պէյրութ

ԻՐԱՔԻ ՇՐՋԱՆ

Մ Ո Ւ Ս Ո Ւ Լ

Ինչպէս ծանօթ է, անցեալ տարեշրջանին մեր ծախքովը Մուսուլի մօտ նորահաստատ Հայկէզք գիւղին մէջ կառուցինք քարաշէն դպրոց մը, 8 դասարաններով, 300-է աւելի աշակերտութեան համար: Դպրոցական տարեշրջանը սկսելուն պէս, հարկ եղաւ դպրոցը կահաւորել եւ 300-է աւելի աշակերտութեան համար գրեթեական պիտոյքներ հայթայթել ու ուսուցիչներ վարձել: Այս լրացուցիչ գործին համար ալ, անցնող տարեշրջանին, Իրաքի համար սահմանուած պիւտձէէն ուղարկեցինք 250 տոլար, որ ծառայեց բուն նպատակին:

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂ ՄԸ ՄՈՒՍՈՒԼԻ ՄԷՁ

Մուսուլի եւ Հայկէզքի մեր բարեկամներուն, որոնք տարիներէ ի վեր մեր վստահութիւնը վայելած եւ մեր նպաստները

ստացած ու մատակարարած են տեղէ տեղ փոխադրուող 1500-ի մօտ դաղթականութեան, հրահանգեցինք կազմակերպել Հայ Կարմիր Սաչի մասնաճիւղ մը: Միաժամանակ գրեցինք Պաղտատի մեր Շրջանային Վարչութեան, որպէսզի ինք եւս հաղորդակցութեան մէջ ըլլայ եւ ջանայ ստեղծել մասնաճիւղերու ցանց մը՝ հայարնակ գիւղերու եւ մասնաւորապէս Մուսուլի մէջ:

Յունիսի վերջերը ստացանք նամակ մը Մուսուլէն, որ արդէն իսկ ստացած լինելով մեր Ծրագիր-Կանոնադիրն ու պաշտօնագիրը, իսկոյն հիմը դրած են, կազմելով տիկիներու Յանձնաժողով մը, որ իր կարգին ձեռնարկած է արդէն իր թիւը ստուարացնելու:

Հաւրէզքի հայութիւնը, տակաւին շատ կարիքներ ունի հոգալիք. ինչպէս դպրոցի շարունակութիւնը, եկեղեցիի կառուցում եւ նման անհրաժեշտ ու անբաժան պէտքեր: Դպրոցին մասը Հայ Կ. Սաչի սեփական հիմնադրութիւնն ու գործը նկատելով, օգնութիւնը շարունակելու է որոշ չափով մը:

Պ Ա Ղ Տ Ա Տ

Պաղտատի մեր Շրջ. Վարչութիւնը եւ տեղական Մասնաճիւղը անոր հովանիին ներքեւ, շարունակեցին մասնաւոր հոգածութեան առարկայ դարձնել հայ մայրերն ու նորածին մանուկները, ինչպէս նաեւ տեղական դաղթական հայութեան չքաւոր դասուն օժանդակեցին: Գաղթակայանին մէջ հաստատեցին Դարմանատուն-Հիւանդանոց մը, անցեալ աշնանէ ի վեր: Շրջ. Վարչութեան մեր ընկեր բժիշկ անդամները ձրիօրէն տրամադրեցին իրենց ժամանակը եւ դարմանեցին բազմաթիւ փոքրիկներ, տարափոխիկ հիւանդութեանց դէմ պաշտպանելով զանոնք եւ մահացութիւններու առաջըն առնելով: Այս գործին համար յատկացուցինք իրենց, պիւտձէի սահմաններուն մէջ դարձեալ, 100 տոլարի գումար մը:

Բացի Պաղտատի տեղական մեծ մասնաճիւղէն, որ 50 անդամներէ կը բաղկանայ, Յունուարէն սկսած, փոքրիկ մասնաճիւղ մը եւս հաստատուեցաւ Պաղտատի գաղթակայանին, այսինքն բուն հիւանդանոց-դարմանատան շրջանին մէջ: Շրջանային Վարչութիւնը խոստացած էր եւ ջանքեր ի գործ կը դնէր, նոր մասնաճիւղեր հիմնելու նաեւ Պասրայի եւ Քերքիւքի մէջ: Այս վերջին

էրկու վայրերու մասին կը սպասէինք Շրջ. Վարչութեան Տեղեկազրին, որ պիտի հասցնէր մեզ, այս ժողովին համար: Սակայն կ'երեւի ուշացաւ, Շրջ. ժողովին ուշ գումարման հետեւանքով հաւանօրէն:

Կը փափաքինք այս ժողովի ուշադրութեան յանձնել նաեւ որ Իրաքի շրջանը իր աշխարհազրական դիրքով, կրնայ սատար հանդիսանալ մանաւանդ հայ գերիներու ազատագրութեան գործին: 11-րդ Ընդհ. ժողովը առանձնապէս նկատի պէտք է առնէ այս կարեւոր հարցը եւ յատուկ պիտո՞ճէ քուէարկէ, որպէսզի Իրաքի մէջ եւս կարողանանք կատարել ազատագրութեան մեծ գործը:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Տարեշրջանի ընթացքին, Ատրպատականի Շրջանային Վարչութենէն ստացած ենք հաշուեկշիռներ, մեր անցեալ տարեշրջանի ուղարկած գումարներուն համար: Այդ շրջանը ակտիւ գործունէութիւն է ցոյց տուած, ներքնապէս կատարելով Կ. Սաչային աշխատանքներ տեղւոյն վրայ, նպաստներ գոյացնելով տեղական մասնակի ձեռնարկներէ եւ օգնութեան հասնելով տեղական կարօտութիւններու:

Դպրոցական տարեշրջանի սկիզբէն իսկ, բացած է դարձեալ 14 գիւղական դպրոցներ եւ մեր հաշուոյն պարտք ընելով, հոգացած է Հայ Կ. Սաչի դպրոցներուն ծախքերը: Իրենց համար դրժուած Ժ. Ընդհ. ժողովի սակէն հազիւ կարողացանք ուղարկել 200 տոլար, սկիզբները մեր պիւտճէի մէջ կրելով յայտնի դրժուարութիւն, սակաւութեան հետեւանքով:

Այս շրջանի գործունէութեան մասին աւելի լաւ դադափար մը կազմելու համար կուտանք անոնց հաշուեկշիռը:

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱ ԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1930 ՅՈՒՆԻՍ 12 — 1931 ՄԱՅԻՍ 31

Մ Ո Ւ Տ Ք	դո. սմ.	դո. սմ.
Նախորդ հաշուից մնացորդ		1,457.60
Ստրմաստի աղէտեալների եւ վերաշինութեան անունով՝ Մեչետի դպրոցի Հոգ.	756.40	
Նոյն նպատակով Թէհրանի դպրոցի աշակ. Միութիւնից	150.00	
Նոյն նպատակով Ղազուինի Հայ Կանանց Միութիւնից	1,000.00	
Նոյն նպատակով Թէհրանի Հայ Կանանց Կարմիր Սաչից	4,000.00	
Նոյն նպատակով Արեւմտեան Եւրոպայի Հայ Կանանց Կ. Սաչից	1,350.00	
	<hr/>	7,256.40
Ամերիկայի Կարմիր Սաչի Կենտրոնական Վարչութիւնից նախորդ տարուայ ցէնդի հաշուին	2,550.00	
Նոյնից ներկայ տարուայ ցէնդի հաշուին 100 դ.	2,130.00	
Նոյնից Հայաստանի նորեկ տարադիրների եւ բնտարկեալների անունով	3,869.00	
	<hr/>	8,549.00
Անդամաւճարներից	360.00	
Երեկոյթ պարահանդէսից	797.55	
	<hr/>	1,157.55
Փոխարինարար Ներսէս Արք. Մելիք-Թանգեանից վերցրած		1,400.00
	<hr/>	19,820.55
		Գումար

Ե Լ Ք

	դր. սմ.	դր. սմ.
Ղարադաղի 14 դպրոցներին օժանդակութիւն և և տեսչին (Պ. Մ. Գրիգորեանին) ուժեղ 2,650.00		
Սալմաստի աղէտեալներին օժանդակութ. -1,400.00		
Սալմաստի դպրոցներին օժանդակութ. և վերաշինութ. համար ծախսուած 2,141.60		
Թաղիարաղի և Սուլտուղի դպրոց. օժ. 200.00		
Թաւրիղի Ազգային դպրոցները չբաւոր սաներին թոշակ և զգեստ 1,400.00		
Ձեռագործի նիւթեր 117.20		
Հայաստանի նորեկ տարազիրներին և զանազան անձանց օժանդակութիւն 2,435.00		
Նորեկ տարազիրներին և Հայաստան ուղարկուած պ. Հ. Պանիրեանի միջ. 2,469.00		
Գրասենեակային ծախսեր 140.40		
Ծառայողի ուժեղ 192.00		
Ձանդեղուրի աղէտեալներին 250.00		
Վերադարձուած Սրբ. Մելիք-Թանդեանին փոխարինարար վերցրած գումարը 1,400.00	14,795.20	
Կանխիկ 1931 Յունիս 1-ին (Սալմաստի վերաշին.)	5,025.35	
	19,820.55	

Ընկերուհիներ և Ընկերներ, ահա ամբողջ պատկերը Հայ
Կ. Խաչի կազմակերպութեան Ամերիկայէն մինչև Ատրպատական :
Մենք կը հաւատանք որ ԺԱ. այս Ընդհ. ժողովը պիտի տայ այն-
պիսի ազգօգուտ որոշումներ, որոնք լիովին պիտի արդարացնեն
մեր ժողովուրդի յոյսերը և յառաջիկայ տարուան մէջ Հայ Կ.
Խաչը պիտի դառնայ աւելի մեծ ու աւելի ուժեղ համազգային
մարմին մը :

Հ. Կ. ԽԱՉԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յ Ո Ւ Յ Ա Կ

Հ. Կ. ԽԱՉԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ԸՆԴՀ. ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1930 — 1931

Մասնակիւրու անուն	Նշանակուած քօթա	Ստացուած գումար քօթայի հաշ.	Ստացուած դժր. Աւլոմի հաշոյն	Ստացուած ընդ. գումար
Էյբրըն	200.00	109.18	16.00	125.18
Պէթէնտօրֆ	100.00	5.00	12.00	17.00
Պինկհէմթըն	200.00	80.65	15.00	95.65
Պոստոն	150.00	58.25	16.00	74.25
Պրէնտֆօրտ	150.00	105.00	21.00	126.00
Պրուքլին	150.00	—	21.00	21.00
Պօկօթա	150.00	130.00	31.00	161.00
Քէմտըն	100.00	105.00	—	105.00
Քլիվլէնտ	150.00	55.00	16.00	71.00
Չըլսի	200.00	100.00	24.35	124.35
Շէքաիօ	300.00	186.00	—	186.00
Ինտիանա Հարպըր	100.00	29.00	—	29.00
Տիթթոյիթ-Տէլլէյ	350.00	350.55	37.00	387.55
Սաթենիկ — Տիթթոյիթ	350.00	350.00	—	350.00
Իստ Ս. Լուիզ	300.00	113.00	8.00	121.00
Յրէզնօ	400.00	329.70	—	329.70
Կոլթ	150.00	147.00	—	147.00
Կուէթ	50.00	53.36	10.00	63.36
»րէնտ Բէփիցա	150.00	31.50	14.00	45.50
Կրէնիթ Սիթի	300.00	200.00	14.00	214.00
Համիլթըն	150.00	159.25	32.00	191.25
Հարթֆըրտ	150.00	125.00	—	125.00
Հէյլրէի	200.00	192.20	38.30	230.50
Հայլընտ Փարք, Տիթ.	700.00	500.00	—	500.00
Ինտիլըն Օրչըրտ	250.00	148.75	26.00	174.75
Քինոչա	50.00	66.35	5.00	71.35
Լօվէլ	200.00	84.25	18.00	102.25
Լօրէնս	200.00	167.15	—	167.15
Լաքփօրթ	100.00	10.00	—	10.00
Լին	250.00	115.00	12.00	127.00
Լօս Անճըլէս	350.00	175.00	—	175.00
Մէտֆրտ	50.00	50.00	—	50.00
Մեսինա	100.00	87.50	—	87.50
Միլիթնտէյլ	—	40.00	—	40.00
Միտլիլ	—	11.85	—	11.85
Միլֆըրտ	150.00	135.75	24.00	159.75
Նիւպրիփօրթ	150.00	90.00	2.00	92.00
Նիւ Պրիթէյն	300.00	250.00	—	250.00
Նիւթըն Ըփըր Յօլտ	150.00	75.50	33.00	108.50
Հաւանա, Քուպա	100.00	78.50	3.50	82.00
Նուարք	200.00	106.10	27.00	133.10
Նիւ Եորք	600.00	217.00	42.00	259.00
Նիւ Կարաֆօլտ	300.00	212.20	—	212.20
Փէթըրսըն	200.00	316.85	35.00	351.85
Փուլթաքէթ	250.00	258.35	21.00	279.35
Փրովիտենս	500.00	188.00	12.00	200.00
Ֆիլատելֆիա	800.00	600.20	—	600.20
Փոնթիաք	150.00	100.00	16.00	116.00
Փորթլէնտ	200.00	200.00	17.00	217.00
Րիչմընտ	200.00	200.00	33.00	233.00
Սէլիմ Փիպլատի	100.00	17.60	10.00	27.60
Սիբաքիւզ	250.00	195.25	16.00	211.25
Սէյնթ Քաթրինզ	200.00	138.28	—	138.28
Թօրօնթօ	300.00	87.04	23.00	110.04
Թրոյ-Ուոթրվիթ	300.00	257.00	—	257.00
Եոնիլըն Սիթի-	—	—	—	—
Ուէստ Նիւ Եորք	400.00	400.50	18.00	418.50
Ուոթրթաուն	150.00	101.30	6.50	107.80
Ուոթէկըն	250.00	219.50	32.00	251.50
Վուստր	350.00	475.79	2.00	477.79
Ուէստ Փուլթէն	150.00	113.15	20.00	133.15
Հուայթիւսվիլ	350.00	335.00	57.00	392.00
Եոթիքա	100.00	75.00	—	75.00
Բումանիա	—	38.92	—	38.92
Կեդր. Վարչութեան միջոցով Ծոմասպա- հուլիսի և Ծոմուս- դի քարտերէ	—	87.30	155.50	242.80
	13,900.00	10,040.57	992.15	11,032.72

Ե Լ Ք

դր. սմ. դր. սմ.

Ղարաղաղի 14 դպրոցներին օժանդակութիւն եւ տեսչին (Պ. Մ. Գրիգորեանին) ուժերիկ 2,650.00		
Սարմաստի աղէտեալներին օժանդակութ. -1,400.00		
Սարմաստի դպրոցներին օժանդակութ. եւ վերաշինութ. համար ծախսուած	2,141.60	
Թաղիաբազրի եւ Սուլտուզի դպրոց. օժ.	200.00	
Թաւրիզի Ազգային դպրոցների չքաւոր սաներին թոշակ եւ զգեստ	1,400.00	
Ձեռագործի նիւթեր	117.20	
Հայաստանի նորեկ տարագիրներին եւ ղանազան անձանց օժանդակութիւն	2,435.00	
Նորեկ տարագիրներին եւ Հայաստան ուղարկուած պ. Հ. Պանիրեանի միջ.	2,469.00	
Գրասենեակային ծախսեր	140.40	
Ծառայողի ուժերիկ	192.00	
Ձանգեղուրի աղէտեալներին	250.00	
Վերադարձուած Սրբ. Մելիք-Թանգեանին փոխարինարար վերցրած գումարը	1,400.00	14,795.20

Կանխիկ 1931 Յունիս 1-ին
(Սարմաստի վերաշին.) 5,025.35

19,820.55

Ընկերուհինե՛ր եւ ընկերներ, ահա ամբողջ պատկերը Հայ Կ. Պաշի կազմակերպութեան Ամերիկայէն մինչև Ատրպատական: Մենք կը հաւատանք որ ԺԱ. այս Ընդհ. Ժողովը պիտի տայ այն-պիսի ազգօգուտ որոշումներ, որոնք լիովին պիտի արդարացնեն մեր ժողովուրդի յոյսերը եւ յառաջիկայ տարուան մէջ Հայ Կ. Պաշը պիտի դառնայ աւելի մեծ ու աւելի ուժեղ համազգային մարմին մը:

Հ. Կ. ԽԱՉԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մանածիւղերու անուն	Նշանակուած քօթա
Էյբրըն	200.00
Պէթէնաօրֆ	100.00
Պինկհէմթըն	200.00
Պոստոն	150.00
Պրէնտֆօրտ	150.00
Պրուքլին	150.00
Պօլօթա	150.00

2. Կ. ԽԱԶԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1930 ՅՈՒԼԻՍ 8 — 1931 ՅՈՒԼԻՍ 20

Մ ՈՒ Տ Ք

Նախորդ Կեդր. Վարչութենէն փոխանցուած Թիւ 340 եւ 343 չէֆերու գումարը, որ չէ մտած նախորդ հաշուեկշիռի մէջ	4,824.47	
	50.00	4,874.47
<hr/>		
Կազմակերպական		
Քօթա		
Չեռնարկներէ	7,821.08	
Անդամավճարներէ	988.65	
Ծննդեան քարտերէ	537.86	
Ծումապահութենէ	692.95	
		10,040.54
<hr/>		
Այլ եւ այլ աղբիւրներ		
Աւլոմէ	990.15	
Նուիրատուութենէ	240.43	
Փոխատուութենէ	330.00	
Փոխառութենէ	500.00	
Փոխանցելիներէ	65.00	
Ջանազաններէ	435.12	
Դիւանականէ	1.54	
Տոկոսէ	100.59	
Չնախատեսուած	100.00	
		2,762.83
<hr/>		

Ընդհ. գումար 17,677.84

Ե Լ Ք

Կազմակերպական		
Քարտուղարի թոշակի	1,500.00	
Գրասենեակի վարձքի	525.00	
Դիւանական ծախքերու	442.39	
Ճանապարհածախքի (ատենախօսներու եւ 10րդ ու 11րդ Պատգ. Ժողովներու)	955.66	
Տպագրական		
ա) Շրջաբերականներու, Կանոնագիրի եւ անդեկագիրի	585.80	
բ) Ծանուցումի	511.97	
գ) Ջանազաններու	184.09	
		4,704.91
<hr/>		
Այլ եւ այլ ծախքեր		
Թիւ 340 եւ 343 չէֆեր (գործածուած փոխանցման շրջանին)	50.00	
Աւլոմէ	1,002.20	
Փոխատուութեան	52.85	
Փոխառութեան	500.00	
Փոխանցելի	64.00	
Ջանազաններու	162.37	
Չնախատեսուած	1,205.30	
		3,036.72
<hr/>		
Ընդհանուր նպատակներու յատկացուած		
Ջաւարեան շէնքին (Աթէնք)	1,200.00	
Հին Յունաստանի շրջանին	680.43	
Թրակիա-Մակեդոնիոյ շրջանին	200.00	
Սիւրիոյ շրջանին	601.00	
Պէյրութի ձեմարանին	2,000.00	
Իրաքի շրջանին	350.00	
Ատրպատականի շրջանին	200.00	
Հայաստան	500.00	
Վեթերան-զինուորական-հիւանդներու	240.00	
Որդեգիր ուսանողներու	875.00	
		6,846.43
<hr/>		
Գումար		14,588.06
Պատրաստ գումարներ Յուլիս 20-ին		
Saving Acc.	1,219.60	
Checking Acc.	1,870.18	
		3,089.78
<hr/>		
Ընդհ. գումար		17,677.84

Մ Ո Ւ Տ Ք

Պատրաստ դումար (1930 Յուլիս 8)	\$4874.47	
Հասոյթ (մինչեւ 1931 Յուլիս 20)	12803.37	
Գումար		\$ 17677.84
Տեղական Հասոյթ	\$517.00	
Գումար		\$517.00
Տեղական Հասոյթ	\$271.00	
Գումար		\$271.00
Ամերիկայի կեդրոնէն	\$250.00	
Տեղական Հասոյթ	455.00	
Գումար		\$705.00
Ամերիկայի կեդրոնէն	\$200.00	
Տեղական Հասոյթ	178.00	
Գումար		\$378.00
Ամերիկայի կեդրոնէն	\$300.00	
Տեղական Հասոյթ	587.00	
Գումար		\$887.00
Տեղական Հասոյթ	\$1,320.00	
Գումար		\$1,320.00
Ամերիկ. կեդրոնէն (1929 եւ 1930ին)	\$2,000.00	
Տեղական Հասոյթ	50.00	
Գումար		\$2,050.00
Ամերիկայի կեդրոնէն	\$400.00	
Սարմաստի աղէտեայներուն		
Համար ստացուած	400.00	
Տեղական Հասոյթ	125.00	
Գումար		\$925.00
Ընդհանուր գումար		\$24730.84

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

ԺԱ. ԸՆԴՀ. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ

1931 Յուլիս 8—11, Ֆիլատելիա

Հ. Կ. ԽԱԶԻ ԺԱ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Հ. Կ. Խաչի 11-րդ Ընդհ. Ժողովի բացման հանդէսը տեղի ունեցաւ Ֆիլատելիա, Յուլիս 8-ին, Y. M. C. A.-ի սրահին մէջ: Սրահը լեցուն էր պատգամաւորներու, համակերներու եւ բարեկամներու բազմութեամբ մը: Ատենապետուհի Տիկին Ս. Տէստէկլիւլի բացման խօսքերէն յետոյ, կարգաւ խօսեցան Տիկին Փ. Մուրատեան, Ֆիլատելիոյ զոյգ մասնաճիւղերու կողմէ, Տիկին Ո. Շաւարշունի, Կեդր. Վարչութեան կողմէ, ընկեր Թափառական, Պուլկարիոյ շրջանի պատգամաւորը, եւ Տիկին Զ. Սերոբեան: Ամէնքն ալ վեր հանեցին Հայ Կ. Խաչի կատարած գործը եւ յոյս յայտնեցին որ կանացի այս կազմակերպութիւնը խորապէս ըմբռնելով իր դերի մեծութիւնը պիտի աշխատի ոչ միայն կատարել որրահաւաք, բարեսիրական ու կրթական գործ, այլ պիտի աշխատի պատրաստել տիպար հայ մայրերը մեր ցեղին:

Գեղարուեստական բաժնին իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերին ծանօթ երգչուհի Տիկին Նուարդ Շաղոյեան-ձիվէլէկեան, Պոստոնէն, պրն. Ե. Եարտըմեան, Օր. Արուսեան եւ պ. Խորէն Նարզիկեաններ, Ֆիլատելիայէն, երգով, ջութակով ու դաշնակով: Արտասանութիւններ ըրին Տիկին Ս. Կոկեան, Ֆիլատելիայէն, եւ Տիկին Ա. Տէր Վարդանեան, Տիթրոյիթէն:

Բացման հանդէսը փակուեցաւ մեծ խանդավառութեան մէջ, գիշերուան ժամը 12-ին:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Հայ Կ. Խաչի 11-րդ Ընդհ. Ժողովին ուղղուած էին բազմաթիւ շնորհաւորական եւ ողջոյնի հեռագիրներ ու նամակներ, արտասահմանի մեր Շրջանային Վարչութիւններէն, Պատգմ.

ժողովներէն, Ամերիկայի Մասնաճիւղերէն, ինչպէս նաեւ անհատ ընկերուհիներէ եւ ընկերներէ: Ասոնք կարգացուեցան հանդէսին մէջ:

ԱՌԺԱՄԵԱՅ ԴԻԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Առժամեայ դիւանը կազմուեցաւ հետեւեալներէ. — Ատենապետուհի՝ Տիկին Ս. Խօջապահեան, Ատենաղապրուհի՝ Տիկին Զ. Սերոբեան:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Մամուլի տեղեկատու ընտրուեցաւ ընկեր Մ. Վերածին:

ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՇԴՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Իրաւասութիւններ ճշդող Յանձնախումբը կազմուեցաւ հետեւեալներէ. —

- 1. Տիկին Ս. Ռումեան,
- 2. Տիկին Ա. Յովսէփեան,
- 3. Տիկին Ս. Ապահեան
- 4. Տիկին Մ. Անսուրեան,
- 5. Տիկին Փ. Խօջարեան:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԵՌԱՊԱՏԻԿ ՅԱՆԿ

ՊԱՏՐԱՍՏՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Եռապատիկ ցանկ պատրաստող Յանձնախումբը կազմուեցաւ հետեւեալներէ. —

Տիկին Ա. Շալճեան, Տիկին Փ. Մուրատեան եւ ընկեր Վ. Քրմոյեան:

ԲԱՆԱԶԵԻԻ ԵՒ ՕՐԱԿԱՐԳԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս Յանձնախումբը կազմուեցաւ հետեւեալներէ. — Ընկերուհիներ Ա. Շալճեան, Էլիզա Քաջունի, Արուսեակ Տէր Վարդանեան, Նոյեմի Աղապապեան եւ ընկեր Թափառակեան:

ԴԻԻԱՆԱԿԱՆ-ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ

ՔՆՆՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս Յանձնախումբը կազմուեցաւ հետեւեալներէ. — Ընկերուհիներ Ե. Տէյրմէնճեան, Ս. Ռումեան, Լ. Եղղուպեան, Փայլուն Մուրատեան եւ Փայլուն Պոյաճեան:

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ԵՒ ՊԻՏՏՃԷԻ

ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս Յանձնախումբը կազմուեցաւ հետեւեալներէ. — Ընկեր Տ. Տէպաղեան, ընկերուհիներ Հ. Մեսրոպեան, Փայլուն Խօջարեան, Ա. Յովսէփեան եւ Խնկեան:

ՄՆԱՅՈՒՆ ԴԻԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մնայուն դիւանը կազմուեցաւ հետեւեալներէ. — Ընկերուհիներ Ս. Խօջապահեան եւ Զ. Սերոբեան՝ ատենապետուհիներ: Ընկերուհիներ Ա. Շիրվանեան եւ Սիրուհի Կոկեան՝ ատենաղապրուհիներ:

ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՇԴՈՂ

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

11-րդ Ընդհ. ժողովին կը մասնակցին հետեւեալ շրջաններն ու մասնաճիւղերը:

Արեւմտեան Ելրուպա — 3 ձայն, ընկերուհի Զ. Տէպաղեան 2 ձայն, ընկեր Տ. Տէպաղեան 1 ձայն:

Ռումանիա — 3 ձայն, ընկերուհի Լ. Եղոյեան 2 ձայն, Տոքթ. Ա. Բարսեղեան 1 ձայն:

Պուլկարիա — 3 ձայն, Թափառակեան 2 ձայն, Տոքթ. Ա. Բարսեղեան 1 ձայն:

Թրակիա-Մակեդոնիա — 1 ձայն, Տոքթ. Ղ. Աճէմեան:

Յունաստան — 3 ձայն, ընկերուհի Ա. Շիրվանեան 1 ձայն, ընկերուհի Մ. Անսուրեան 1 ձայն, ընկ. Վ. Քրմոյեան 1 ձայն:

Սիրիա — 3 ձայն, ընկեր Մ. Վերածին 2 ձայն, Տոքթ. Ղ. Աճէմեան 1 ձայն:

Իրազ — 1 ձայն, ընկերուհի Ս. Ապահեան:

Ատրպատական — 3 ձայն, ընկեր Յ. Պարոյրեան 2 ձայն, Զօր. Սեպուհ 1 ձայն:

Ամերիկայի Կեդր. Վարչութիւն — 2 ձայն, ընկերուհի Ս. Տէստէկիւլ, ընկերուհի Ո. Շաւարչունի:

Պօլոթա — 1 ձայն, ընկերուհի Ա. Շիրվանեան

Պրէնթըրտ — 1 ձայն, ընկերուհի Ա. Շալճեան

Տէլլէյ — 1 ձայն, ընկերուհի Լաչիկեան

Հայլընտ Փարք — 2 ձայն, ընկերուհի Ն. Աղապապեան

Յրէզնօ — 1 ձայն, ընկերուհի Խնկեան

- ԿուէլՓ — 1 ձայն, ընկերուէի Ո. Տէյրմէնճեան
- Կրէնիթ Սիթի — 1 ձայն, ընկերուէի Ս. Թէրզեան
- Կօլթ — 1 ձայն, ընկերուէի Ա. Տ. Վարդանեան
- Համիլթըն — 1 ձայն, ընկերուէի Մ. Տէրտէրեան
- Հարթֆըրտ — 1 ձայն, ընկերուէի Ե. Տէյրմէնճեան
- Հէյլըրհիլ — 1 ձայն, ընկերուէի Սէմէրճեան
- Հաւանա — 1 ձայն, ընկեր թուօթխուչեան
- Լօրենս — 1 ձայն, ընկերուէի Սարը Պօղոսեան
- Մեսինա — 1 ձայն, ընկերուէի Ս. Արիաճեան:
- Մեաֆըրտ — 1 ձայն, ընկերուէի Ս. Ռոմեան
- Միլլէնսէյլ — 1 ձայն, ընկերուէի Հ. Մեսրոպեան
- Միլֆըրտ — 1 ձայն, ընկերուէի Փ. Մուրատեան
- Նիւ Պրիփորթ — 1 ձայն, ընկերուէի Քէյթմանճեան
- Նիւ Պրիթըն — 1 ձայն, ընկերուէի Ո. Պոյաճեան
- Նիակարաֆօլս — 1 ձայն, ընկերուէի Ս. Միրանչաճեան
- Փեթըրսըն — 2 ձայն, ընկերուէի Ա. Յովսէփեան, ընկերուէի Մ. Սայաճանեան
- Փիլատելֆիա — 2 ձայն, ընկերուէիներ Մ. Սայաճանեան եւ Ս. Սօչապճեան:
- Փօնթիաք — 1 ձայն, ընկերուէի Լ. Եաղուպեան
- Փօրթլէնտ — 1 ձայն, ընկերուէի Օր. Յ. Ասատուրեան
- Փուլթաքէթ — 1 ձայն, ընկերուէի Օր. Չ. Գարանֆիլեան
- Սիւրաքիւզ — 1 ձայն, ընկերուէի Գալաֆեան
- Սաթենիկ Մասնաճիւղ — 2 ձայն, ընկերուէիներ Հ. Մեսրոպեան եւ Ա. Տ. Վարդանեան:
- Թրոյ — 1 ձայն, ընկերուէի Ս. Ապաճեան
- Ուէսթ Նիւ Եորք — 2 ձայն, ընկերուէիներ Ա. Շարճեան եւ Մ. Անսուրեան
- Եոթիքա — 1 ձայն, ընկերուէի Մկրտիչեան
- Վօքէկըն — 1 ձայն, ընկերուէի Է. Քաջունի
- Ուոթթիթաուն — 1 ձայն, ընկերուէի Մ. Ղուկասեան
- Հուայթինսփիլ — 1 ձայն, ընկերուէի Ս. Մուրատեան
- Ուէսթ Փուլըն — 1 ձայն, ընկերուէի Փ. Սօչարեան
- Վուստր — 1 ձայն, ընկերուէի Չ. Սերօրեան:

Հետեւեալ մասնաճիւղերը իրենց սահմանուած քօթայի երկու երրորդը չէին լրացուցած, սակայն ներկայ տարուան տնտեսական բացառիկ տաղնապը նկատի ունենալով, 11-րդ Ընդհ. Ժողովը որոշեց միայն այս տարուան համար բացառապէս իրաւասու նկատել զանոնք, քանի որ շատեր կէսը եւ կէսէն աւելի վճարած էին: Ասոնք են.—

- Էյքըրըն — 1 ձայն, ընկերուէի Ա. Տէօմպէլէկեան
- Չըլաի — 1 ձայն, ընկերուէի Ս. Ռոմեան
- Շիքալօ — 2 ձայն, ընկերուէի Փ. Սօչարեան, ընկ. Թուօթխուչեան
- Ինտիրն Օրչըրտ — 1 ձայն, ընկերուէի Ս. Կոկեան
- Լօս Անճըլլոս — 1 ձայն, ընկերուէի Սնկեան
- Նուարք — 1 ձայն, ընկերուէի Է. Քաջունի
- Սէյնթ Քաթըրինզ — 1 ձայն, ընկերուէի Ն. Յովսէփեան:
- 11-րդ Ընդհ. Ժողովին կը մասնակցին ընդամէնը 50 պատգամաւոր-պատգամաւորուէիներ՝ 72 ձայներով:

ԳՐԱՒՈՐ ՏԵՂԵԿԱԳՐԵՐՈՒ ԸՆԹԵՐՅՈՒՄ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.— ԱՄԵՐԻԿԱ.

11-րդ Ընդհ. Ժողովս լսելով Կեդր. Վարչութեան դրաւոր տեղեկագիրը, Հաշուեքննիչ եւ Յարաբերական Թղթեր Քննող Յանձնախումբերու դրաւոր եւ բերանացի ղեկուցումները եւ այս առթիւ լուսաբանութեան համար տրուած հարցումները եւ ըստ էութեան արտայայտուած թեր ու դէմ կարծիքները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.—

Որ՝ Հ. Կ: Սաչի Կեդր. Վարչութիւնը այս տարուան ընթացքին ջանք խնայած չէ ընդարձակելու եւ աւելի զարկ տալու կազմակերպական գործին, աւելցնելով ընկերուէիներու թիւը եւ կազմելով նոր մասնաճիւղեր:

Որ՝ Կեդր. Վարչութեան փոխ-յարաբերութիւնները եւ դիւանական աշխատանքները մասնաճիւղերու թէ արտասահմանի վարչութիւններուն հետ եղած են սիրալիր ու կանոնաւոր:

Որ՝ հակառակ այս տարուան տնտեսական տաղնապին, եկամուտներու զգալի նուազում չէ ունեցած:

Որ՝ հակառակ 10-րդ Ընդհ. Պատգմ. Ժողովի Կեդր. Վարչութիւնը գործադրած չէ նոր ձեւի հաշուական տոմարներու գործածութիւնը եւ միայն տարուան վերջը մասնաւոր հաշուակալի միջոցաւ հաշիւները արձանագրած եւ հաշուեկշիռը պատրաստած է:

11-րդ Ընդհ. Պատգմ. Ժողովը կը գտնէ գնահատելի տուեալ պայմաններու մէջ Կեդր. Վարչութեան գործունէութիւնը եւ կը թելադրէ նորընտիր Կեդր. Վարչութեան որ նոյնութեամբ գործադրէ 10-րդ Ընդհ. Ժողովի որոշումը տոմարակալութեան եւ հաշուական կանոնաւորութեան մասին:

Հ. Կ. Խաչի 11-րդ Ընդհ. Պատգմ. Ժողովը լսելով Ամերիկայի Կեդր. Վարչութեան տեղեկագիրը արտասահմանի մասին, եւ Սիւրիոյ, Յունաստանի, Իրազի, Ատրպատականի, Թրակիոյ, Մակեդոնիոյ, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Արեւմտեան Եւրոպայի եւ Եգիպտոսի գրաւոր ու բերանացի զեկուցումները եկաւ հետեւեալ եզրակացութիւններուն.—

2. ՍԻՒՐԻԱ.— Որ՝ Սիւրիա-Լիբանան որպէս սահմանակից Թուրքիոյ եւ ամենահայաշատ կեդրոն, արժանի է լուրջ ուշադրութեան, ուր կեդրոնացած են աւելի քան 120,000 դաղթականներ, ազատագրուած Թուրքիոյ խորերէն:

Որ՝ Սիւրիահայ Օգնութեան Խաչը գնահատելի աշխատանք կատարած է, դաղթականներու տեղաւորման, որբերու ազատագրութեան, դպրոցներու հոգատարութեան, ձեռնարկներու իրագործման եւ իր ոյժերը ներած չափով կազմակերպած ու զեկավարած է պատասխանատու գործեր:

Ժողովս միաձայնութեամբ կը գնահատէ կատարուած աշխատանքները, յայտնելով իր գոհունակութիւնը, եւ կ'որոշէ քուէարկել համապատասխան պիւտձէ աւելի լայն չափով ընթացք տալու վերոյիշեալ ձեռնարկներուն:

3. ՅՈՒՆԱՍՏԱՆ.— Ա. Նկատելով որ 10-րդ Ընդհ. Ժողովը կրճատած է Յունաստանի օժանդակութեան բաժինը, որու հետեւանքով հնարաւոր եղած չէ վճարել ուսուցիչներու ամսականները, որ 1930-1931 տարեշրջանին տիրող աննպաստ պայմաններու հետեւանքով Շրջ. Վարչութիւնը տագնապալի շրջան մը բուրրած է:

Բ.— Որ՝ Չաւարեան վարժարանի հողի գնման հարցը վերջնականապէս կարգադրուած չէ, որ՝ դրուած դժուար պայմաններու մէջ Շրջ. Վարչութիւնը թէ մասնաճիւղերը աշխատած են վերջին վեց ամսուան ընթացքին ըստ կարելոյն իրենց վրայ դրուած պարտականութիւնը կատարել, ջանալով Հ. Կ. Խաչը դարձնել զերազանցապէս կանացի կազմակերպութիւն, Ժողովը գնահատելով կատարուած աշխատանքները՝ կ'որոշէ.—

Հետապնդել եւ վերջացնել Չաւարեան վարժարանի հողի գնման խնդիրը եւ շարունակել Յունաստանի Հ. Կ. Խաչի վարժարաններու օժանդակութիւնը համապատասխան գումարներ մըտցընելով պիւտձէին մէջ:

4. ԻՐԱԳ.— Ժողովը կը յանձնարարէ Կեդր. Վարչութեան մտածել իրազի Հ. Կ. Խաչի կազմակերպութեան ստեղծումի եւ դորացման մասին, ոյժ տալով ի մասնաւորի ազատագրութեան եւ վարժարաններու գործին:

5. ԱՏՐՊԱՍՏԱԿԱՆ.— Լսելով Ատրպատականի զեկուցումը եւ ծանօթանալով Շրջ. Վարչութեան կատարած աշխատանքներուն, ի մասնաւորի դաղթականներու տեղաւորման եւ վարժարաններու օժանդակութեան, Ժողովը կը յայտնէ իր գոհունակութիւնը եւ կ'որոշէ.—

Օժանդակել Ատրպատականի զիւղական վարժարաններուն եւ Ատրպատական ապաստանած դաղթականներուն, այս առթիւ համապատասխան գումար մտցնելով պիւտձէին մէջ:

6. ԹՐԱԿԻԱ-ՄԱԿԵՂՈՆԻԱ.— Նկատելով որ այս շրջանէն տեղեկագիր հասած չէր, լսելով միայն Կեդր. Վարչութեան տեղեկութիւնները Նոր Յունաստանի մէջ տարուած կազմակերպական աշխատանքներու մասին, Ժողովը նկատեց որ անոնք եղած են թոյլ: Գտնելով սակայն, որ յիշեալ շրջանները նորակազմ են և կը գտնուին տնտեսական ծանր տագնապի մէջ, անոնց կատարած աշխատանքը կը նկատէ բաւարար եւ կը յանձնարարէ Կեդր. Վարչութեան որ միջոցներ գտնէ կազմակերպելու այս շրջանը:

7. ՊՈՒԼԿԱՐԻԱ.— 11րդ Ընդհ. Ժողովը լսելով պատգամաւորի գրաւոր եւ բերանացի զեկուցումը Շրջ. Վարչութեան, Մասնաճիւղերու գործունէութեան եւ Մեսրոպեան ձեմարանի նիւ-

թական ու բարոյական աշխատանքներու մասին, կը գտնէ.

Ա. Որ՝ Պուլկարիոյ նորակազմ Գթութեան Սաչը արտակարգ շնորհութիւն ձեռք բերած, անդամներու թիւը կրկնապատկած, եւ ապաւինած իր ոյժերուն տեղական միջոցներով օգնած ու խրանամած է բազմաթիւ որբ-որրուհիներ, օժանդակած է տարագիր ընտանիքներու, կարօտ հիւանդներու եւ սատարած վարժատան աղքատիկ աշակերտներու դաստիարակութեան:

Բ. Որ՝ իր տարեկան եկամուտին 100-ին 25-ը տրամադրած է Ամերիկայի Կեդր. Վարչութեան, փոխադրելով 3000 լէվա, եւ ծրագրած է գաղթական շրջաններու մէջ աշխատանոցներ բանալ, որուն հիմնադրամի գլխաւոր մասը տեղական միջոցներով պիտի ապահովուի:

Գ. Որ՝ Մեսրոպեան ձեմարանը գնահատելի ծառայութիւն կատարած է Պուլկարիոյ շրջանի դաստիարակչական գործին եւ միակ հաստատութիւնն է, ուր միջնակարգ կրթութիւն պիտի ստանան որբերն ու աղքատիկ աշակերտները,

Ժողովը միաձայնութեամբ գոհունակութիւն կը յայտնէ կատարած աշխատանքներուն եւ կ'որոշէ. —

Օժանդակել Մեսրոպեան ձեմարանին, ոյժ տալ աշխատանոցի ծրագրին, եւ օգնել աղքատ ուսանողներու, մտցնելով համապատասխան գումար պիւտճէին մէջ: Թեւադրել նաեւ Շրջ. վարչութեան որ Սասքովոյի անգործներուն օգնելու միջոցներ ինք աշխատի գտնել:

Տ. ՌՌՄՄԱՆՒԱ. — Ժողովը քննելով Ռուսմանիոյ Շրջ. վարչութեան կատարած աշխատանքները, կը գտնէ որ Շրջ. վարչութիւնը աշխատած է նոր մասնաճիւղեր հիմնել, տեղական հասոյթներով նպաստած է հիւանդներու եւ չքաւորներու, միջոցներ ձեռք առած է հիմնելու ասեղնագործի աշխատանոց մը եւ դարձրնելու շահարկ ձեռնարկ մը, կը գնահատէ Ռուսմանիոյ շրջանի գործունէութիւնը եւ կ'որոշէ. —

Օժանդակել Ռուսմանիոյ Շրջ. վարչութեան՝ դիւրացնելու համար անոր կազմակերպական աշխատանքները:

Թ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ. — Ժողովը լսելով այս շրջանի պատգամաւորներու զեկոյցը, ինչպէս նաեւ Կեդր. վարչութեան տեղեկութիւնները, կը գտնէ որ կատարուած աշխատանքները ե-

ղած են բաւարար տրուած պայմաններուն մէջ, եւ կը թելադրէ նորընտիր Կեդր. վարչութեան պահել կանոնաւոր յարաբերութիւն այս շրջանին հետ եւ աշխատիլ աւելի ուժեղացնել կազմակերպական աշխատանքները: Այս շրջանի գործերը, որոնք են՝ բուժակայաններու հաստատում, բժշկա-առողջապահական գրք-ըօյկներու հրատարակութիւն, աշխատաւոր հայ մայրերու մանուկներու պաշտպանութիւն, Ֆրանսահայ սերունդի հայեցի դաստիարակութիւն եւ թուրքաւոր հայրենակիցներու օգնութիւն, դիւրացնելու համար թողուլ կ'որոշէ տալ նիւթական օժանդակութիւն:

10. ԵԳԻՊՏՈՍ. — 11-րդ Ընդհ. Ժողովը գոհունակութեամբ տեղեկանալով որ Եգիպտոսի Հայ Կ. Սաչը աշխատանքներ կատարած է Մուսուլի, Սիւրիոյ եւ Իրագի մէջ, որ՝ Հայ Կ. Սաչի Գասնամեակը տօնած է եւ որոշած է միանալ Ամերիկայի Հ. Կ. Սաչին, կը յանձնարարէ նորընտիր Կեդր. վարչութեան որ պաշտօնապէս ճշդելէ ետք այդ պարագան, յայտնէ 11-րդ Ընդհ. Ժողովի գոհունակութիւնն ու գնահատութիւնը Եգիպտոսի Հայ Կ. Սաչին:

11. ՀԱՅԱՍՏԱՆ. — Առանց նկատի առնելու Հայաստանի կառավարութեան դերքը մեր կազմակերպութեան հանդէպ, Ընդհ. Ժողովը կ'որոշէ պահել նոյն բարեացակամութիւնը եւ նոյն պիւտճէն:

ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՆԵՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՂՈՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

1. ՀԱՅ ԿՆՈՋ ԻՆՔՆԱՋԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Նկատի առնելով որ մեր կազմակերպութեան անդամուհիներու միտքը մշակելու եւ անոնց մտաւոր հորիզոնը ընդլայնելու գործը Հ. Կ. Սաչի հիմնական նպատակներէն մին է, 11-րդ Ընդհ. Ժողովը լսելէ ետք պատգամաւորներու կարծիքները եւ Կեդրոնական վարչութեան առաջարկութիւններն ու թեւադրութիւնները, կ'որոշէ յանձնարարել Կեդր. վարչութեան.

Ա. — Գաղութներու մէջ կազմել ձեռնհաս անձնաւորութիւն-

ներէ յանձնախումբեր, որոնք գրադին ինքնազարգացման հարցով, կազմակերպեն դասախօսութիւններ եւ վիճարանական ժողովներ :

Բ. — Իւրաքանչիւր վայրի մէջ գտնուող ընդունակ ընկերուհիներու վրայ պարտականութիւն դնել որ տրամադրեն իրենց ժամանակը այս գործին :

Գ. — Մշակել հայ կանանց մտաւոր հասունութեան մատչելի նիւթերու ցանկ մը եւ պարտադրել մասնաճիւղերուն որ այդ նիւթերու շուրջ զորոյցներ ու վիճարանութիւններ կազմակերպեն :

Դ. — Յաճախակի շրջաբերականներով տեղեակ պահել մասնաճիւղերը Հ. Կ. Սաչի գործունէութեան մասին զանազան երկիրներու եւ վայրերու մէջ :

Ե. — Սոսկիւր ընդունակութիւն ցոյց տուող ընկերուհիները քաջալերել որ զարգացնեն իրենց այդ յատկութիւնը եւ դառնան կին խօսողներ :

2. ՀԱՅ Կ. ԽԱԶԻ ԸՆԴ. ՕՐԿԱՆԻ ՀԱՐՑ

Հ. Կ. Սաչի ընդհանուր օրկան մը ունենալն օգտակար նկատելով հանդերձ, ժողովս առայժմ անժամանակ կը գտնէ եւ կ'որոշէ յետաձգել :

3. ՀԱՍՈՑԹԻ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Ընդհանուր ժողովը կը հրահանդէ Կեդր. վարչութեան գործադրել հետեւեալ միջոցները, Հ. Կ. Սաչի հասոյթներու յաւելման համար :

1. Ծոմապահութիւն :
2. Տօնական օրերու շնորհաւորական բացիկներու վաճառում :
3. Ընդհանուր հանգանակութիւն ժապաւիներու տոմարով :
4. Գանձանակներ զետեղել համակիր ընտանիքներու մէջ :
5. Հանդէսներու, ներկայացումներու, երեկոյթներու առանձնակի ծաղիկներ վաճառել մասնաւորապէս թոքախտաւորներու համար :
6. Ընկերական հաւաքոյթներու մէջ որդեգրել կամաւոր նըւէրներու գրութիւնը :
7. Ծնունդի եւ Զատիկի առթիւ շնորհաւորական այցելութիւններ կազմակերպել եւ նուէրներ հաւաքել :

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ընդհանուր ժողովը կ'որոշէ պահել հին ուսանողներու թիւը այս տարեշրջանին եւ հաւելցնել նորեր :

5. ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ, ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ, ԱԲՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ, ՀԻՒԱՆԿՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Այս գործին համար ժողովը կ'որոշէ անանձին բաժին յատկացնել ընդհանուր պիւտճէն :

6. ՄԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ժողովը կը թելադրէ որ նախահաշուի Յանձնախումբը շրջաններու պիւտճէն գծելու ատեն նկատի ունենայ այս կարեւոր գործը եւ իւրաքանչիւր վայրի պիւտճէի մէջ մտցնէ համապատասխան դումար :

7. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ա. Ընդհանուր ժողովը կը հրահանդէ Կեդր. վարչութեան, Շրջ. վարչութիւններուն ու բոլոր մասնաճիւղերուն հետաքրքրուիլ նոր սերունդով, կազմել Սան-Սանուհիներու միութիւններ ուր որ հնարաւոր է եւ առ նիւթական ու բարոյական օժանդակութիւն՝ պահելով հովանաւորի դեր :

Բ. Հայեցի դաստիարակութեան նպաստող ուրիշ կարեւոր միջոց նկատուեցաւ մանկական թերթի մը հիմնումը : Նկատի ունենալով սակայն, որ Հ. Կ. Սաչին համար առ այժմ հնարաւոր չէ նման ձեռնարկի մը նախաձեռնութիւնը, ժողովը որոշեց քաջալերել եւ բարոյական ու նիւթական օժանդակութիւն տալ այդպիսի հրատարակութեան մը ստեղծման պարագային :

Նոր սերունդի կազմակերպութեան ու դաստիարակութեան համար ժողովը կը թելադրէ նախահաշուի Յանձնախումբին դումար մը սահմանել ընդհ. պիւտճէին մէջ :

8. ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՀԱՐՑ

Այս հարցն ունենալով համազգային բնոյթ, մեր նոր սերունդը հայ պահելու համար զաղութներու մէջ, Ընդհանուր ժողովը կը հրահանդէ Կեդր. վարչութեան գործադրել ամէն հնարաւոր

միջոց, ստեղծելու համադրժակցութիւն տեղական նոյն հար-
ցով շահագրգռուող մարմիններու հետ, եւ այս կարեւոր գործը
ղնելու համար համազգային մարմնի մը հովանաւորութեան ներ-
քեւ, միատեսակ ուսումնական ծրագրով մը: Մինչ այդ՝ մեր
մասնաճիւղերը կը շարունակեն տալ իրենց բարոյական եւ նիւ-
թական օժանդակութիւնը այս գործին՝ մինչայսժմեան եղանակով:

9. ԾԳՆՈՒԹԻՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒ

Ընդհ. ժողովը կը հրահանգէ Հ. Կ. Սաչի Մասնաճիւղերուն
տեղական կարօտեալներու օգնութիւն հասցնելու համար աշխա-
տիլ տեղոյն վրայ գտնուող ուրիշ բարենպաստակ մարմիններու
հետ ստեղծել միջոցներ՝ առանց ծանրանալու Հ. Կ. Սաչի քան-
ձին վրայ:

10. ՀԱՅ ԲԵԿՈՐՆԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ Կ

Ընդհ. ժողովը լսելով Կեդր. վարչութեան զեկոյցը, պատ-
գամաւորներու արտայայտութիւնները եւ Սիւրբոյ Օգնութեան
Սաչին յատուկ զեկոյցազիրը հայ բեկորներու ազատագրութեան
հարցի նկատմամբ եւ այդ ուղղութեամբ թափուած աշխատանքն
ու ցարդ ձեռք բերուած արդիւնքը, միաձայնութեամբ կ'որոշէ.

Նկատելով որ՝ Թրքահայաստանի, Անատոլիի, Միջագետքի
եւ Սիւրբոյ անապատներուն մէջ հազարաւոր հայ բեկորներ դեռ
կ'ապրին անանուն կեանք մը եւ ենթակայ են ընդմիջտ կորստեան.

Նկատելով որ՝ բոլոր հայ կազմակերպութիւններէն միայն
Հայ Կ. Սաչն է որ բացառիկ ուշագրութեան առարկայ ըրած է
այս կարեւոր գործը եւ ձեռնարկած է գործնական աշխատանքի,
որ պէտք ունի աւելի հիմնաւորման, կ'որոշէ յատկացնել
\$2,000.00 (երկու հազար տոլար):

Միւս կողմէ կը լիազօրէ Կեդր. վարչութիւնը ամէն հնարա-
ւոր միջոց ի գործ դնելու, ստեղծելու համար համազգային հե-
տաքրքրութիւն: Գործը բարոյական ու նիւթական աւելի լայն ու
հաստատուն հիմքերու վրայ դնելու նպատակաւ կը հրահանգէ
ջանք թափել ստեղծելու միայնուհիմնադրամ, համադրժակ-
ցութեան հրաւիրելով բոլոր Հայրենակցական Միութիւնները,
ազգային կազմակերպութիւնները եւ անհատները:

ՉՆԱԽՍՏԵՍՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ

1. ՀԱՅ Կ. ՆԱԶԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԳԸ

Այս հարցի մասին կարծիքներու փոխանակութիւններէ ետք
Ընդհանուր ժողովը որոշեց ունենալ Կ. Սաչի պաշտօնական եր-
գը, թելադրելով Կեդր. վարչութեան բանալու համար մրցանա-
կաւոր մրցում մը: Կազմել գրականութենէ հասկցող գրական
յանձնախումբ մը եւ ստացուած ոտանաւորները ենթարկել անոնց
քննութեան: Մրցանակ չահողը պիտի ստանայ \$25.00: (Սոյն
գումարը Կ. Սաչի Կեդր. վարչութեան տրամադրութեան տակ
դնել խոստացաւ ներկայ պատգամաւորներէն՝ ընկեր Յ. Պա-
րոյրեան):

2. ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Որոշուեցաւ այցելութիւններ կազմակերպել ամէն տեղ տալու
համար բարոյական միութարութիւն հիւանդներու եւ բանտար-
կալներու:

3. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՎԱՅՐ

11-րդ Ընդհ. ժողովը Վուստրի պատգամաւորուհիին միջո-
ցաւ հրաւէր ստացած ըլլալով յաջորդ Ընդհ. ժողովը Վուստրի
մէջ գումարելու, որոշեց ընդունիլ սոյն մասնաճիւղին հրաւէրը
եւ 12-րդ Ընդհ. ժողովը գումարել Վուստրի մէջ:

1931—1932 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՆԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մ Ո Ւ Տ Ք

1. Անդամավճարներէ	\$2,500.00
2. Ալպոմներէ	1,000.00
3. Ձեռնարկներէ	8,350.00
4. Ծոմապահութենէ	2,000.00
5. Ծննդեան քարտերէ	650.00
6. Բացառիկ նուէրներէ	500.00
Գումար՝	\$15,000.00

Ե Լ Ք

1. Բարսեղյարութեան	\$1,560.00
2. Գրասենեակի	420.00
3. Դիւանական	300.00
4. Ճանապարհածախսի	500.00
<hr/>	
	\$2,780.00
5. Ծանուցումներու	300.00
6. Տպագրութեան	300.00
7. Զնախատեսուած	600.00
<hr/>	
	\$1,200.00
<hr/>	
Գումար՝	\$3,980.00

ԳՈՒՒՆԱՐՈՒՄՄ ՊԻՒՏՃԷՆԵՐ

1. Ռումանիոյ շրջանին	\$50.00
2. Հին Յունաստան (գալրոցներու)	700.00
3. Զաւարեան տան (հողին)	900.00
4. Թրակիոյ-Մակեդոնիոյ	150.00
5. Պուլկարիոյ շրջանին (ընդհ. կարիք եւ Պասքովոյի վարժարանին)	250.00
6. Մեսրոպեան ճեմարանին	300.00
7. Սիւրիոյ շրջանին	1,000.00
8. Ազատագրութեան (Սիւրիոյ շրջանին միջոցով)	1,500.00
9. Պէյրութի ճեմարանին	2,000.00
10. Իրաքի շրջանին	200.00
11. Ազատագրութեան (Իրաքի շրջանին միջոցով)	500.00
12. Ատրպատականի շրջանին	250.00
13. Հայաստան	500.00
14. Փրանսայի շրջանին	150.00
15. Վեթերաններու, հիւանդներու եւայլն	800.00

16. Ուսանողներու	600.00
17. Նոր սերունդի դաստիարակութեան	500.00
<hr/>	
	\$10,350.00
18. Հիմնադրամ	670.00
<hr/>	
	\$15,000.00

Ընդհ. գումար

ԿԵՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յանձնաժողովին կազմած եռապատիկ ցանկին վրայ գաղտնի քուէարկութիւն կատարուելով, Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալ ընկերուէիներն ու ընկերները.—

1. Ընկերուէի Սիրանուշ Տէստէկիււ
2. Ընկերուէի Լուսի Եղոյեան
3. Ընկերուէի Ովսաննա Շաւարշուանի
4. Ընկերուէի Զապէլ Սերոբեան
5. Ընկեր Գալուստ Էյնաթեան
6. Ընկեր Արսէն Թէրլէմէզեան
7. Ընկերուէի Սիրազարդ Ռումեան

Ընդհ. ժողովի ԳՈՂՈՎԻ ԳՈՂՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆԱԻՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ, ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ԵՒ ԱԶԱԿԻՑ ՄԱՄՈՒԼԻՆ

Ընդհ. ժողովի փակումէն առաջ, դիւանը յանուն ժողովի, գնահատութեան ու շնորհակալութեան խօսք ուղղեց Հ. Պաշի բոլոր Շրջանային վարչութիւններու, մասնաճիւղերու, անհատ ընկեր-ընկերուէիներու եւ բարեկամներու 11-րդ Ընդհ. ժողովին ուղղած շնորհաւորական եւ ողջոյնի նամակներուն ու հեռագրներուն համար:

Ժողովը թելադրեց նաեւ նորրնտիր Կեդր. Վարչութեան, որ առանձին նամակներով իր գոհունակութիւնը յայտնէ մեզ աջակից թերթերու խմբագրութեանց.— Պոստոնի «Հայրենիք»ին, Ֆրէզնոյի «Ասպարէզ»ին եւ «Մշակ»ին, Փարիզի «Յառաջ»ին, Աթէնքի «Նոր Օր»ին, Սելանիկի «Հորիզոն»ին, Գահիրէի «Յուսա-

500
1877

բեր»ին, Սոփիայի «Նոր Արաքս»ին, Պուրբէշի «Հորիզոն»ին եւ Պէյրութի «Ազդակ»ին, որոնք սիրալոյսով կը բերեն իրենց աջակցութիւնը Հ. Կ. Սաչին եւ բարոյապէս զօրավիգ կը հանդիսանան մեր բոլոր ձեռնարկներուն:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՓԱՌԻՄԸ

Ընդհանուր Ժողովի հանդիսաւոր փակումը տեղի ունեցաւ Յուլիս 11-ին, չարաթ երեկոյ ժամը 11.30-ին:

Փակման հանդէսին մէջ խօսք առին, դիւանի կողմէ ընկերուհիներ Ս. Խօշապճեան եւ Զ. Սերոբեան: Հին ու նոր վարչութեան կողմէ խօսեցաւ ընկերուհի Ս. Տէստէկիւլ: Դիւանի հրաւերով կարգաւ խօսեցան Զօր. Սեպուհ, Ա. Շալճեան, Փ. Մուրատեան եւ Վ. Քրմոյեան:

Բոլոր խօսողներն ալ, Ընդհ. Ժողովի մաքուր եւ դաստիարակիչ մթնոլորտը մատնանշելով, մասնաւորապէս յոյս յայտնեցին, որ ժողովին զծած բոլոր որոշումները պիտի դործադրուին առաւելագոյն չափերով եւ Հ. Կ. Սաչի մարմիններն ամէն տեղ, միացեալ ճակատով պիտի շարունակեն Հ. Կ. Սաչի ազգանուէր ու հայրենաշէն դործը:

Երգեր երգեցին՝ ընկերուհի Է. Քաջունի, ընկեր Ն. Շամիլեան եւ Ռ. Տէօմպէլէկեան: Արտասանեցին՝ Օր. Զ. Գարակիւլեան, Ն. Աղապապեան եւ Ս. Կոկեան:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

2013

Հայաստանի Ազգային գրադարան

NL0424105

